Ազգ Azg

8 ՍԵՊՏԵՄԲԵՐ 2011 ՀԻՆԳՇԱԲԹԻ 158 (4776)

ISSN: 1829-1651

# Զինվոր է մահացել

Երեկ առավոտյան ԼՂՀ ՊԲ արեւելյան ուղղությամբ տեղակայված զորամասերից մեկի պահպանության տեղամասի մարտական դիրքում հերթափոխություն իրականացնելիս հրազենային գնդակից վիրավորվել եւ զոհվել է ՊԲ ժամկետային զինծառայող, 1992 թ. ծնված Հայկ Մկրտչյանը:

Պաշտպանության նախարարության ուղարկած հաղորդագրության համաձայն՝ Մկրտչյանը մահացել է համածառայակից, ժամկետային զինծառայող Լեոնիդ Նազլուխանյանի կողմից զենքի հետ վարվելու կանոնների խախտման հետեւանքով արձակված կրակոցներից: Կատարվածի առնչությամբ ՊՆ քննչական ծառայությունում հարուցվել է քրեական գործ ՔՕ 373 հոդվածի 3-րդ մասով:

Հ. Հ.

# Փառահեղ հաղթանակ, որ ավելի իրական դարձրեց եզրափակիչի ուղեգրի նվաճումը

## *Հայաստանի հավաքականը Ժիլինայում ջախջախեց սլովակներին*

**ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ**

Ֆուտբոլի Եվրոպայի առաջնության ընտրական հերթական մրցախաղում Հայաստանի հավաքականի ֆուտբոլիստները հայ մարզասերներին ցնծալու եւ իրենցով հպարտանալու մի նոր, ավելի ծանրակշիռ առիթ ընձեռեցին: Սլովակիայի հավաքականի հետ եզրափակիչի ուղեգրի համար վճռորոշ մրցախաղում մեր ֆուտբոլիստները պարզապես փայլեցին խաղային իրենց որակներով, հարձակողական ոճի արդյունավետ խաղով՝ հիացնելով ֆուտբոլասերներին: Դրսեւորելով իրենց վարպետությունը, աչքի ընկնելով անկոտրում կամքով ու վճռականությամբ, ցուցադրելով հոյակապ ֆուտբոլ, Հայաստանի հավաքականի խաղացողները հյուրընկալվելիս պարզապես ջախջախեցին մրցակցին՝ 4 անպատասխան գնդակ ուղարկելով Յան Մուխայի պաշտպանած դարպասը: Եթե գրանցված խոշոր՝ 4-0 հաշիվը ինչ-որ չափով կարելի է անակնկալ համարել, ապա Հայաստանի հավաքականի հաղթանակը բոլոր առումներով օրինաչափ էր: Դա փառահեղ հաղթանակ էր, որը հնարավորություն տվեց շարունակելու պայքարը ուղեգրի համար:

*Տես էջ 7*



ԳԻՏՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ

# Հայտնի դարձան «Լավագույն գիտական աշխատանք» մրցանակաբաշխության հաղթողները



**ՄԱՐԻԵՏԱ ՄԱԿԱՐՅԱՆ**

**Շարունակվում է Ռուսաստանի հայերի միության եւ Համաշխարհային հայկական կոնգրեսի հայտարարած «Մրցանակաբաշխություն-2011»-ը: Երեկ ՀՀ ԳԱ ակադեմիայի նախագահությունը հրապարակեց «Լավագույն գիտական աշխատանք» ամենամյա մրցանակաբաշխության հաղթողների անունները: ԳԱԱ նախագահ, ակադեմիկոս Ռադիկ Մարտիրոսյանը, շնորհավորելով հաղթողներին, բարձր գնահատեց Ռուսաստանի հայերի միության (ՌՀՄ) եւ Համաշխարհային հայկական կոնգրեսի (ՀՀԿ) իրականացրած եւ իրականացվող բազմաբնույթ, բազմաշիտ ծրագրերը: «Բայց այդ ծրագրերի մեջ մեզ համար էապես կարեւոր են այն ծրագրերը, որոնք կապված են մշակույթի, կրթության, գիտության խնդիրներին: Պրն Արա Աբրահամյանը եւ ընդհանրապես միության ղեկավար կազմը, հասկանալով այն դժվարությունները, որ մենք այսօր ունենք կրթության, գիտության եւ մշակույթի ոլորտներում, իրենց աջակցությունն են բերում, եւ այն ունի շոշափելի արդյունքներ, որոնք հնարավոր չէ չգնահատել», ասաց Ռադիկ Մարտիրոսյանը: 2007-ից սկիզբ առած մրցանակաբաշխությունը հաջող ընթացք ունի, եւ տարեցտարի ավելանում է թե՛ մասնակիցների եւ թե՛ անվանակարգերի թիվը: Իսկ դրանց հաջողությունն ու հետաքրքրությունը, ըստ պրն Մարտիրոսյանի, «կայանում է նրանում, որ նախ եւ առաջ այդ ծրագրով ու նախաձեռնությամբ ներկայացնում են գիտության, մշակույթի դերը մեր երկրի, մեր հասարակության զարգացման գործում, եւ այն միտված է մի խնդրի՝ բարձրացնել այդ ոլորտների վարկը ու դրանով նպաստել այդ բնագավառների զարգացմանը»:**

*Տես էջ 2*



# Օգնենք փրկել բանաստեղծ Հովհաննես Գրիգորյանի կյանքը

Հայ ժամանակակից հանրահայտ բանաստեղծ Հովհաննես Գրիգորյանի մոտ հայտնաբերվել է թոքերի քաղցկեղ: Նրան հնարավոր է փրկել միայն գերմանական կլինիկաներից մեկում: Բուժումն արժե 50 000 դոլար: Մեզ անհրաժեշտ է բոլորի օգնությունը: Ցանկացած չափի օգնություն խիստ կարեւոր է մեզ համար:

Հեռախոս՝ 56 41 42, 094 49 76 01

Հաշվեհամարներ՝ (ՊրոԿրեդիտ բանկ) AMD 253090017430- 0090

$ 253090017455-0091 EUR 253090017448- 0092

# Հայաստանի դեսպան Տիգրան Սեյրանյանն իր հավատարմագրերն է հանձնել Չեխիայի նախագահին



**Սեպտեմբերի 7-ին Պրահայի նախագահական նստավայրում՝ Պրաժսկի հրադում Հայաստանի նորանշանակ դեսպան Տիգրան Սեյրանյանն իր հավատարմագրերը հանձնեց Չեխիայի նախագահ Վացլավ Կլաուսին: Այնուհետեւ մոտ քառորդ տեւած առանձնազրույցում Չեխիայի նախագահը եւ Հայաստանի դեսպանը քննարկեցին երկկողմ հարաբերությունների զարգացման հեռանկարները: Վացլավ Կլաուսը գոհունակություն է հայտնել, որ Պրահայում վերջապես կգործի Հայաստանի դեսպանությունը, եւ հույս հայտնել, որ նորանշանակ դեսպանն իր ներդրումը կունենա հայ-չեխական հարաբերությունների ամրապնդման գործում: Զրույցի ընթացքում քննարկվել են նաեւ տարածաշրջանային խնդիրներ, Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորման հարցը, տնտեսական կապերի աշխուժացման հնարավորությունները:**

**Տիգրան Սեյրանյանը Հայաստանի Հանրապետության առաջին դեսպանն է Չեխիայում, որի նստավայրը Պրահան է: Հայաստանի անկախության հռչակումից ի վեր Չեխիայում ներկայացված Հայաստանի երեք դեսպանների՝ Աշոտ Ոսկանյանի, Ջիվան Թաբիբյանի եւ Աշոտ Հովակիմյանի նստավայրը եղել է Վիեննան: Մինչ Պրահայում դեսպանության բացումը՝ նախորդ երեք տարիներին այստեղ գործել է Վիեննայի դեսպանության գրասենյակը, որը կրկին ղեկավարել է Ա. Ոսկանյանը: Այժմ նոր դեսպանի ժամանումով եւ դեսպանության լիարժեք գործունեությամբ հայ-չեխական հարաբերությունները կմտնեն նոր փուլ: Օգոստոս ամսից դեսպանությունում գործում է նաեւ հյուպատոսական բաժինը:**

**Հ. ԱՍԱՏՐՅԱՆ**
**Պրահա**

# Շուշի քաղաք շատ պատմական

**ՄԱՐԻԵՏԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ**
**Շուշի, Արցախ**



*Շուշիի քաղաքապետ Կարեն Ավագիմյան*

Շուշիի ապագան քաղաքապետ **Կարեն Ավագիմյանի**, ինչպես եւ Արցախի կենտրոնական իշխանության ու բոլոր մյուս ծրագիր կազմողների համար պատկերանում է այս կերպ. «Ես Շուշիի ապագան տեսնում եմ որպես զբոսաշրջության կենտրոն: Հյուրանոցային համալիրների կառուցումը խթան կհանդիսանա դրա համար: Այս տարվա ընթացքում արդեն երկու հյուրանոցային համալիր է բացվել: «Ավան-Շուշին», որ ամերիկահայ բարերարների միջոցներով է կառուցվել (Ալեք Բաղդասարյան եւ այլք), 65-70 համար ունի, բայց ոչ միայն տուրիստներ է ընդունում: Կոնֆերանս-դահլիճներում կարելի է համաժողովներ կազմակերպել: Սեպտեմբերի մեկին էլ բացվեց «Շուշի գրանդ հոթել» հյուրանոցը (այդ մասին «**Ազգը**» տեղեկացրել է- Մ.Խ.), արեւելյան մարզաձեւերի լիբանանահայ աշխարհահռչակ վարպետ Կարո Քեբաբչյանի նախաձեռնությամբ, 55 լավագույնս կահավորված սենյակներով եւ հարակից բոլոր հարմարություններով, նրա միջոցներով է վերականգնվել, այստեղ նախատեսված է նաեւ չինական բժշկության առողջական կենտրոն»:

Քաղաքապետին մի պահ ընդհատենք՝ Շուշիի ապագայի վերաբերյալ հարցի պատասխանի իրավունքը տալով նաեւ ճանաչված նկարիչ **Հովիկ Գասպարյանին**, ով, այո, հաստատեց՝ տուրիստները սկսել են Շուշի այցելել, սակայն. «Փոխանակ մի պատմական փողոց վերականգնեն, ուրիշ բան է կատարվում. կան հարուստ մարդիկ, որ լսել են՝ տուրիստ է գալիս, սկսել են ճոխ հյուրանոց սարքել, փոխանակ քաղաքը սարքեն: Տուրիստն էլ, մեկ-երկու, կգա, կտեսնի՝ չսարքած քաղաք, բան չկա անելու, էլ չի գա: Անցյալի մշակութային կոլորիտի մի տասը տոկոսը գոնե պիտի երեւա: Շուշիի անցանելի փողոցները բոլոր փողոցների քսան տոկոսն են: Շուշիի գեղանկարն են գծում՝ Երեւանում են գծում, արտասահմանում են գծում. առանց Շուշին իմանալու ո՞նց կարելի է նրա գեղանկարն գծել: Առաջինը Շուշին պետք է մաքրվի ավերակներից, ամուր հիմքերը մնան, նոր իմանաս՝ ի՞նչ ես կառուցելու: Անպայման նախ պատմական շենքերը պետք է վերականգնեն: Մարիամյան օրիորդաց վարժարանն էն ձեւ են վերականգնում, որ գնում-տեսնում ես՝ ասում ես, լավն էն է՝ չսարքեն, ճարտարապետական առումով անգրագիտություններ են կատարվում: Կամ մայթերը՝ հին մայթերը շատ մեծ քարով տաշած ու շարած էին, մաշվածությունն էլ հմայք էր տալիս: Քանդել-տարել-թափել են, բերել են բետոնից պլիտեք ու ասֆալտ: Նույնը օրիորդաց վարժարանի մայթերին է՝ ահագին էլ ճանապարհը բարձրացրել են, քանի որ շենքը նախատեսված է եղել ինչ-որ հարթությունից՝ կամարներ ունի:

*Տես էջ 3*

# Ռազմական բյուջեն բազմապատկող Ադրբեջանն ի՞նչ խաղաղություն հաստատող կամ ամրապնդող

## *Եվրոմիության հատուկ ներկայացուցիչը Երեւանում*

Չնայած ԵԱՀԿ Մինսկի խմբում Ֆրանսիայի համանախագահությունը որոշ դեպքերում մեկնաբանվում է որպես Եվրոմիության ներգրավվածություն, նորություն չեն բարձրաձայնումները, թե Եվրոմիությունն առավել ակտիվ դերակատարության հավակնություն ունի ղարաբաղյան հակամարտության կարգավորման գործում:

Միեւնույն ժամանակ, Եվրոպական միության գործունեության ձեւաչափն ու առայժմ դրսեւորած ներուժը արտաքին քաղաքական հարցերում, թեկուզ հակամարտությունների կարգավորման զգալի փորձ ունեցող Եվրոպայի տարածքում, ոչ մի հիմք չեն տալիս լավատես լինելու, թե Ֆրանսիայի փոխարինումը Եվրոմիությամբ կարող է դրական ազդել ղարաբաղյան գործընթացի վրա, եթե, իհարկե, հաշվի չառնենք մի տարբերակ, որի դեպքում Հարավային Կովկասի երկրները դառնան ԵՄ-ի մաս:

Այդուհանդերձ, Եվրոմիությունը բնավ էլ չի նախընտրում հակամարտող անդամներ ունենալու ուղին: «Եվրոմիությանը մերձենալու ամենակարեւոր ճանապարհը հակամարտությունների կարգավորումն է», երեկ Երեւանում հայտարարեց Հարավային Կովկասի եւ Վրաստանի ճգնաժամի հարցերով ԵՄ-ի հատուկ ներկայացուցիչ **Ֆիլիպ Լեֆորը**` Հայաստանի արտգործնախարար Էդվարդ Նալբանդյանի հետ հանդիպումից հետո ճեպազրույցում, որին հետեւել է հանդիպումը Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանի հետ:



Լեֆորն ասուլիսում արձագանքեց հարցին, թե ինչպես է ԵՄ-ի ներկայացուցիչը վերաբերվում համանախագահների հաճախակի կոչերին` ուղղված զինադադարի ռեժիմի ամրապնդմանը, շփման գծից դիպուկահարներին հեռացնելուն, ինչպես նաեւ միջադեպերի կապակցությամբ քննության մեխանիզմ սահմանելու վերաբերյալ: ԵՄ-ի հատուկ ներկայացուցիչը նշել է, որ այդ առաջարկները հիանալի են: Ըստ Լեֆորի. «Սրանք հիանալի առաջարկներ են, չեմ ուզում ինչ-որ բան ավելացնել»:

Ֆիլիպ Լեֆորի մատուցմամբ` ԵՄ-ը ցանկանում է աջակցել Հարավային Կովկասում խաղաղության հաստատմանը: Շեշտելով, որ ղարաբաղյան գործընթացը Մինսկի խմբի շրջանակներում է ընթանում, Լեֆորը հիշեցրեց, որ այդ հարցում հիմնարար առաքելությունը ԵԱՀԿ Մինսկի խմբինն է, իսկ Եվրոմիությունն էլ պատրաստ է աջակցել կարգավորմանն ուղղված ջանքերին:

ԵՄ-ի ներկայացուցչի գնահատմամբ, Եվրոմիությունը դա անելու համար ունի ինչպես մեխանիզմներ, այնպես էլ փորձառություն: Չնայած այսօրինակ պնդմանը, Լեֆորի համար, պարզվում է, Հայաստանն ու Ադրբեջանը խաղաղության հասնելու համար հակամարտության հավասարապես զոհեր են, ուստի ԵՄ-ը ցանկանում է աջակցել երկուսին էլ: Ինչեւէ, տարածաշրջան այս մտայնությամբ եկած Ֆիլիպ Լեֆորը փաստում է, թե ԵՄ-ի համար մեր տարածաշրջանը մեծ հետաքրքրություն է ներկայացնում, թեեւ բոլոր ներուժային հնարավորությունները կարող են զարգացում դառնալ վերջնական խաղաղության հաստատմամբ:

Հայաստանի ԱԳ նախարար **Էդվարդ Նալբանդյանն**, իր հերթին, հայտնեց, որ համամիտ է Եվրոմիության այն դիրքորոշմանը, որ Ղարաբաղի հակամարտությունը պետք է կարգավորվի միայն խաղաղ բանակցությունների միջոցով:

Այդուհետեւ անդրադառնալով ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի ոչ մշտական անդամ դառնալու ադրբեջանական նկրտումներին` Նալբանդյանը նշեց. «ՄԱԿ-ի անվտանգության խորհրդի նպատակը խաղաղության հաստատումն է, պահպանումը, ամրապնդումը: Եվ շատերի մեջ հարց է առաջանում` ինչպես է այնտեղ հավակնում հայտնվել մի երկիր` իր ռազմատենչ քաղաքականությամբ, իր պատերազմի քարոզչությամբ, մի երկիր, որի ղեկավարությունը պարծենում է, որ վեց տարվա ընթացքում 20 անգամ մեծացրել է իր ռազմական բյուջեն, մի երկիր, որն ուժի կիրառման սպառնալիքը դարձրել է իր քաղաքականության կարեւոր մասը: Նա փաստորեն սպառնում է հենց այդ խաղաղությանը, եւ ինչպե՞ս կարող է հավակնել ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի անդամ դառնալուն»:

Նալբանդյանի խոսքերով, ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդում Ադրբեջանի ներկայությունը ոչ միայն չի ավելացնի այդ կառույցի հեղինակությունը, այլեւ` հակառակը: Ընդ որում, այդ պարագայում կարող է բարձրանալ բոլոր այն երկրների պատասխանատվության հարցը, որոնք կարող են ձայն տալ այդ թեկնածուի օգտին, հատկապես, երբ Ադրբեջանն այդ պարագայում «մրցակցելու» է ԵՄ-ի անդամ երկու երկրների` Սլովենիայի եւ Հունգարիայի հետ:

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

***ՔՍՏՄՆԵԼԻ ՈՃԻՐ***

# Ոճրագործություն կրոնական հողի վրա. մայրը սավանով խեղդել է զավակներին

**34-ամյա Ռոզա Ալոյանը զանգահարել է հարեւանուհուն եւ հայտնել, որ սպանել է երկու դեռահաս երեխաներին: Այնուհետեւ փակել է դուռն ու «հանգիստ խղճով հեռացել»: Ոստիկանները բնակարանում հայտնաբերել են 6-ամյա Վարդան եւ 4-ամյա Հայկ Ալոյանների դիակները` խեղդամահ վիճակում: Ոստիկանություն բերման ենթարկված մայրը հայտարարել է, որ տանը սավանի կտորներով խեղդամահ է արել իր երկու զավակներին եւ կախել: Որոշ ժամանակ անց նա իջեցրել է որդիներին, պառկեցրել մահճակալին եւ վերմակով ծածկել: Իրավապահ մարմինները մարդասպան մոր տանը հայտնաբերել են մեծ քանակությամբ տարբեր աղանդների պատկանող գրականություն, բրոշյուրներ: Տանը հայտնաբերվել է նաեւ բացված Աստվածաշունչն այն էջի վրա, որտեղ նշվում է, որ Քրիստոսի գալստյան օրը շուտով մոտենալու է:**

**Ռոզա Ալոյանը եւ նրա ամուսինը Գավառի մանկատան սաներ են եւ պետությունից բնակարան ստանալուց հետո տեղափոխվել էին Արարատ: Ըստ որոշ տեղեկությունների` Ռոզան բաժանվել էր ամուսնուց եւ երեխաների հետ առանձին էր ապրում: Հոգեկան շեղման խնդիրներ չեն հայտնաբերվել: Ըստ մեզ հասած լուրերի` Ռոզան «Եհովայի վկա» աղանդի հետեւորդ է: Իրավապահ մարմինների ներկայությամբ հարեւաններն ասել են, որ նա հաճախում է «Եհովայի վկա»-ի հավաքներին: Սակայն օրվա երկրորդ կեսին «Եհովայի վկաներ» կազմակերպությունից տարածվեց հայտարարություն, որտեղ հայտարարել են, որ Ռոզան իրենց շարքերից չէ, առանց անդրադառնալու ավելի կարեւոր այն հարցին, թե նա իրենց ազդեցության տակ եղե՞լ է:**

**Անցյալ տարի նոյեմբերին Սեւան քաղաքի բնակիչ, 23-ամյա Արման Թորոսյանը սպանել էր ծնողներին` 64-ամյա Խաչիկ եւ 57-ամյա Մարիետա Թորոսյաններին: Դեպքի վայրում ոստիկանները հայտնաբերել էին արյունոտված գազի բալոն: Կատարվածը որակվել էր սպանություն կրոնական հիմքերի վրա: Արման Թորոսյանը հայտարարել էր, որ սպանել է ոչ թե իր ծնողներին, այլ սատանաների, իսկ ինքը «աստծո զավակ է»: Այդ ժամանակ էլ բոլոր ցուցանիշներով կասկածվում էր, որ երիտասարդը Եհովայի վկա է, սակայն վերոնշյալ աղանդից հայտարարել էին, որ նա իրենց անդամը չէ: Սակայն, հետաքրքրական զուգադիպությամբ «Եհովայի վկաների» շեֆերը մամուլի հասարակության բազմաթիվ պահանջներին` հրապարակավ ներկայացնել իրենց անդամների ցուցակը, հրաժարվում են:**

**Անկախ հանգամանքից, թե Ռոզան կրոնական որ աղանդին է պատկանում, եթե իրավապահ մարմինները հաստատեն լուրը, որ սպանությունը կրոնական շարժառիթներ ունի, ապա պետք է պատասխանատվության ենթարկել քայքայիչ կազմակերպության բոլոր անդամներին եւ լուրջ միջոցառումներ իրականացնել հասարակությանը նրանցից փրկելու համար:**

**Հ. Հ.**

# Քաղաքապետը պահանջել է արդիականացնել մետրոպոլիտենի սարքավորումները

**Երեւանի քաղաքապետ Կարեն Կարապետյանը երեկ այցելել է Կարեն Դեմիրճյանի անվան մետրոպոլիտեն` ծանոթանալու տեխնիկական վիճակին, ընթացող աշխատանքներին: Մետրոպոլիտենի կառավարման համակարգերը, թեպետ առայժմ ծառայում են անխափան, սակայն խորհրդային ժամանակների արտադրության սարքավորումներ են: Քաղաքապետը խնդիր է դրել կարճ ժամկետում արդիականացնել դրանք` փոխարինելով ավտոմատացված նորագույն սարքավորումներով: Հանձնարարվել է կազմել անհրաժեշտ ֆինանսական ծախսերի նախնական փաթեթ: Ուղեւորների անվտանգությունն ապահովելու նպատակով, «Անվտանգ Երեւան» ծրագրի շրջանակում, մայրաքաղաքի տասը կայարաններում տեղադրվել էր 186 տեսախցիկ, որոնց աշխատանքին մոնիտորով հետեւում են մետրոպոլիտենի համապատասխան ծառայության աշխատակիցները: Քաղաքապետն ասել է, որ շուտով կավելանա եւս 6 մոնիտոր: Առաջիկայում տեսախցիկներ են տեղադրվելու նաեւ շարժակազմերի վագոններում: Անկախության 20-ամյակի կապակցությամբ` գործող 45 շարժակազմերին կավելանան երկուսը: «Մետրոյի հետագա զարգացման ռազմավարությունը պատկերացնելու համար մետրոպոլիտենի տնօրենությանը հանձնարարվել է մշակել կարճաժամկետ, միջին եւ երկարաժամկետ ծրագիր: Նոր կայարանների կառուցման խնդիրը անհրաժեշտություն է, սակայն թանկ հաճույք: Միայն Աջափնյակ թաղամասի երկու կայարանների կառուցումը ավելի քան 200-250 միլիոն դոլար կարժենա: Քաղաքապետը հույս է հայտնել, որ մոտ ապագայում այդ հարցը նույնպես կլուծվի:**

**Հ. Հ.**

# Հայտնի դարձան «Լավագույն գիտական աշխատանք» մրցանակաբաշխության հաղթողները

*1-ին էջից*

Այնուհետեւ ԳԱԱ-ի «Գիտության զարգացման հիմնադրամի» գործադիր տնօրեն, ակադեմիկոս, քարտուղար **Հրանտ Մաթեւոսյանը** տեղեկացրեց, որ նախորդ երկու մրցանակաբաշխությանը ընտրված են եղել հինգ անվանակարգ, իսկ այս տարի դարձել է 14: Եթե առաջներում մրցույթին մասնակցել են մինչեւ 26 գիտնականներ, ապա այս տարի նրանց թիվը հասել է 36-ի եւ մասնակցել են մինչեւ 35 տարեկան երիտասարդները: Պրն Մաթեւոսյանը հատուկ նշեց. «Ոլորտները մեր կողմից անջատելու արդյունքում նկատվեց, որ տարեցտարի ներկայացված աշխատանքների որակը շատ լավացավ»: Մրցույթում ընդգրկվել են մեր հանրապետության ակադեմիական, բուհական համակարգերը, նաեւ պաշտպանության նախարարության «Կանայանի անվան ազգային ռազմավարական հետազոտությունների» ինստիտուտը: Փորձագիտական հանձնաժողովների առաջարկով երկու անվանակարգեր կիսվել են` արեւելագիտություն (հաղթող Վահրամ Տեր-Մաթեւոսյան-ՊՆ եւ Ռուբեն Մելքոնյան- ԵՊՀ), իսկ ինֆորմատիկայում հաղթող են ճանաչվել Հայկ Գրիգորյանը (ԵՊՀ), Հրաչյա Ասցատրյանը (ԳԱԱ): Գրականություն անվանակարգում Կոմիտասի մասին հոդվածաշարի համար մրցանակակիր է ճանաչվել Տաթեւիկ Շախկուլյանը: Պատմությունում` Արման Եղիազարյանը (ԵՊՀ), սոցիոլոգիայից` Էմիլ Օրդուխանյանը, տնտեսագիտությունից` Անահիտ Մանասյանը: Քաղաքագիտություն եւ իրավագիտություն անվանակարգում մրցանակը կհանձնվի Հայկ Սուքիասյանին, քիմիայից` Խաչատուր Մանուկյանին, երկրաբանությունից` Ջոն Կարապետյանին, կենսաբանությունից` Քրիստինե Փիրումյանին, տեխնիկական գիտություններ անվանակարգում` Հայկ Խաչատրյանին, ֆիզիկայից` Դավիթ Հայրապետյանին, մաթեմատիկա ու մեխանիկա անվանակարգում հաղթող է ճանաչվել Սմբատ Գոգյանը, իսկ հայագիտություն եւ ազգագրություն անվանակարգում` Անահիտ Մենեմշյանը: Մրցանակի չափը յուրաքանչյուր անվանակարգում սահմանվել է նվազագույնը 600.000 դրամ:

ՌՀՄ-ի եւ ՀՀԿ-ի փոխնախագահ **Վլադիմիր Աղայանը** բարձր գնահատեց Գիտությունների ազգային ակադեմիայի, գիտության եւ կրթության, մշակույթի, սփյուռքի նախարարությունների հետ համագործակցությունը: «ՌՀՄ-ի եւ ՀՀԿ-ի կողմից անցկացվող ամենամյա մրցանակաբաշխությունը տարբեր ոլորտներում նպատակ ունի աշխուժացնել Հայաստանի մտավոր կյանքը: Իսկ այդ կյանքի աշխուժացման կենտրոնական դեմքը հենց գիտական եւ ստեղծագործական մտավորականության ներկայացուցիչներն են: Եվ հենց նրանց ստեղծագործելու հնարավորություն են տալիս այսպիսի մրցանակաբաշխություններ անցկացնելով, որպեսզի նրանք ստեղծագործեն ի շահ մեր երկրի զարգացման` հենց մեր երկրում...», ասաց պրն Աղայանը:

ՌՀՄ-ի փոխնախագահ **Մհեր Շահգելդյանը**, պատասխանելով լրագրողի հարցին, ասաց. «ՌՀՄ-ի եւ ՀՀԿ-ի նախագահ Արա Աբրահամյանը գիտությունը դիտարկում է որպես Հայաստանի զարգացման կարեւորագույն բաղկացուցիչ եւ այս տեսանկյունից չորս օղակների զարգացումը միմյանց հետ` երիտասարդություն, կրթություն, գիտություն եւ մշակույթ, մենք դիտարկում ենք որպես մեկ ամբողջականություն: Իսկ ինչ վերաբերում է մրցանակակիրների հետագային, ասեմ, որ մեր ծրագրերում նրանք հետագայում կլինեն մեր ուշադրության կենտրոնում: Մրցանակաբաշխությունները շարունակվելու են, եւ անհրաժեշտ է, որ այն երիտասարդները, ովքեր հաղթել են մրցույթներում, իրենց գիտական ապագան կապեն մեր երկրի հետ, որը մեզ համար խիստ կարեւոր է ու գտնվում է մեր ուշադրության կենտրոնում, որպեսզի նրանք հնարավորություն ստանան աշխատել ու ստեղծագործել Հայաստանում, կապված լինեն մեր հող ու ջրի հետ»:

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակութեան Ի տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
**«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ**
Երեւան 0010, Հանրապետութեան 47
Ֆաքս 374 10 562863
e-mail: azg@azg.am
azg2@arminco.com
**www.azg.am**
Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ / հեռ 521635
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ 529221
Հաշվապահութիւն (գովազդ) / հեռ 582960
Լրագրողների սենեակ / հեռ 581841
Համակարգչ. ծառայութիւն / հեռ 582483
***Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն*** / հեռ 529353
Համակարգչային շարուածքը
«Ազգ» թերթի

Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով, ռադիոհեռուստատեսութեամբ կամ համացանցով, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի:
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում:
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատուութիւն չի կրում:

"AZG" Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 10 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 0010

*1-ին էջից*

Ճանապարհը, որ բարձրացնում ես, կամարները կտրում ես, շենքն իր հզորությունը կորցնում է, մայթի սիրուն սալահատակն էդտեղ էլ են փոխել ասֆալտի: Անտարբերությունից է, երկիրը չսիրելուց է, ամեն ինչի եւ ամեն գործի մեջ պիտի սեր լինի: Բոլորը պետք է սիրեն երկիրը՝ հասարակ բանվորից մինչեւ պրեզիդենտը»: Հ. Գասպարյանի տեսակետներին կանդրադառնանք առանձին հրապարակումով, վերադառնանք Շուշվա քաղաքապետին ու քաղաքի խնդիրներին:

Քաղաքապետն, այսպիսով, մեզ հետ զրույցում ուրախանում էր քաղաքի հին ու նոր հյուրանոցներով՝ Շուշին հիմա ունի երեք նորմալ հյուրանոց՝ նորմալ գներով, 6-7 հազար դրամից սկսվող, ու նույնիսկ զբոսաշրջության զարգացման տեղեկատվական կենտրոն ունի:

Քաղաքի հիմնական պրոբլեմներից առաջնահերթը խմելու ջրագծի վերակառուցումն է:

Խմելու ջուր հասցնող Թադեւոսի ջրատարը մի քանի տարի առաջ վերականգնվել է, սակայն քաղաք մտնող ջրի հոսպիտալի վիճակը, մի անգամ եւս ցավեցինք, որ ժամանակին աններելի բան է տեղի ունեցել, բայց եւ՝ այս կառույցները պիտի առաջնահերթ վերականգնվեին, ինչպես Ղազանչեցոց փառավոր եկեղեցին, դրանք են Շուշվա կոլորիտը, դրսին ու ներսին ցույց տալիքը՝ որպես ինքնագիր ու պատմություն:

Քաղաքապետը չհամաձայնեց մեր հարցադրմանը, որ Շուշիում գործազրկության խնդիր կա (գործազրկությունից բողոքում են հատկապես շուշեցի երիտասարդները): Ըստ քաղաքապետի՝ Շուշիում լայնածավալ շինարարություն կա, տղամարդկանց մեծ մասն աշխատում է շինարարությունում, բյուջետային հիմնարկներում, դպրոցներում, մշակույթի օջախներում. «Մենք գործազրկության խնդիր ունենք հիմնականում կանանց շրջանում, քանի որ կանացի աշխատանքն է քիչ, իսկ տղամարդկանց շրջանում չէի ասի, որ գործազրկություն կա»: Իսկ բարձրագույն կրթությամբ մարդկանց շրջանում (շրջանավարտների ութսուն տոկոսը ստանում է բարձրագույն կրթություն) առասին արդեն գրել ենք, Երեւանի ագրարային համալսարանի մասնաճյուղի կառուցումը նույնպես կնպաստի կրթական աշխուժությանը: Ֆրանսահայ բարերարների միջոցներով արհեստագործական դպրոցի կառուցումը կսկսվի շուտով, սկսվել է նաեւ մանկական գիշերօթիկ դպրոցի շինարարությունը, լավ գործերն է թվում քաղաքապետը:

Արտաքնապես Շուշին, այո, սիրունանում է, բայց մարդկանց տրամադրությունները միանշանակ չեն. խորքում իշխում է գավառական մտայնություն, մարդիկ համոզված են, որ արդարություն չկա, շատերն ասում են, որ աշխատատեղերում միայն ծանոթներին են տեղավորում, ահագին շնորհալի ու բանիմաց մարդիկ դուրս են, նրանց փոխարեն աշխատում են պակաս արհեստավարժ ու բանիմաց «տերովները» (սա, իհարկե, ընդհանրապես հայկական մտայնություն է, բայց շուշեցոց մեջ սա ավելի ցցուն էր արտահայտվում). «Ես չգիտեմ, թե դուք ի՞նչ մարդկանց հետ եք զրուցել, բայց մենք ունենք հայկական բնավորություն, որ միշտ բողոքենք: Մեր բնակիչ-

# Շուշի քաղաք շատ դասական

կորուստները շատ են, ավելի շատ, քան հասնում է բնակչությանը: «Հայաստան» համահայկական հիմնադրամի միջոցներով ջրագիծը նորոգվում է արդեն երեք տարի, մոտակա երկու տարում այդ աշխատանքը փաստորեն կավարտվի: Եթե ներքին կորուստները վերացվեն, Շուշիի առաջնահերթ պրոբլեմներից մեկը կլուծվի: Հիմա երկու օրը մեկ է ջուր տրվում բնակչությանը, ամռանն ավելի պակաս է լինում:

Բնակչության թիվն, ըստ քաղաքապետի, պաշտոնապես 4200-ի մոտ է, հաշվառված են այդքան, բայց փաստացի մի երեքուկես հազար մարդ է ապրում քաղաքում: Չհաշվառվածներ, ինչպես նաեւ զորամաս կան Շուշիում:

Ովքե՞ր են Շուշիի բնակիչները: Մի շուշեցի դիպուկ բնորոշեց՝ Շուշին էլ Ղարաբաղի Ամերիկան է՝ արցախցիներ, Բաքվի փախստականներից եւ անգամ Հայաստանից եկածներ կան, որոնք այսօր փորձում են նոր շուշեցու կերպար ձեւավորել: Քաղաքապետն օգտագործեց «խայտաբղետ» բառը, բայց կան բնիկ շուշեցիներ, որոնք պատերազմական գործողություններից հետո վերադարձան իրենց տները:

Սկզբից հատկապես եկել են նրանք , ովքեր բնակարանային խնդիր են ունեցել:

Հիմա բնակֆոնդը սպառված է, բոլորը բաժանված է, իսկ մի պրոբլեմի մասին երեկ մի թեթեւ պատմել եք, այժմ մանրամասնենք: Շատերը կան, որ բնակարանը վերցրել են, սեփականաշնորհել, փակել գնացել են: Երեւի մի քսան-երեսուն տոկոսը բնակֆոնդի այդ վիճակում է. «Պարտավորություններ չունեն մեր հանդեպ, այնպես որ չենք կարողանում ստիպել, որ պատուհանները փակենք գոնե ձմեռը», ասում է Կ. Ավագիմյանը: Սկզբից հինգ տարի, հետո՝ տասը տարի այդ բնակարանները չէին սեփականաշնորհում՝ պայմանագրով տալիս էին վերաբնակչին, իսկ տասը տարին լրանալուց հետո բնակիչն իրավունք ուներ ձրի սեփականացնելու: Մեծ մասը սեփականացրել են, բոլորը հատկացված են: Հիմա բոլոր ապրողներն ապահովված են՝ եթե ապրում ես Շուշիում, ուրեմն բնակարանով ապահոված ես:

Քաղաքապետն ընդունեց, որ մեծ սխալ էր ժամանակին, Շուշին ազատագրելուց հետո տեղի ունեցածը, երբ տները քանդվում էին՝ դրանց շինանյութն օգտագործում էին նոր տուն սարքողները կամ իրենց տները նորոգողները: Գուցե ժամանակի խնդիր էր. «Երեւի մեր ամենամեծ սխալներից մեկն է, որ քանդել են: Կարելի էր լրիվ հակառակն անել՝ բոլոր տները ամրացնել-հարմարեցնել»:

Բայց եղածն անցել է, ու անգամ երբ գնացինք ու տեսանք տասնիններորդ դարավերջի կառույցների՝ Ռեալական դպրոցի, Ժամհարյանների կառուցած



*Նկարիչ Հովիկ Գասպարյան*

ջանում է մասնագիտական աշխատանքի տեղավորման խնդիր, դրանից էլ՝ գործազրկություն:

Շուշիի հեռանկարի տեսակետից գործազրկության խնդիրը լուծելու հնարավորությունները որտե՞ղ պետք է փնտրվեն, արդյո՞ք միայն խթանվող սպասարկման ծառայությունների ոլորտում, արդյո՞ք գյուղատնտեսական կամ բիզնես ծրագրերը չե՞ն ստորադասվում, բա մի երկու փոքր ձեռնարկություն չլինի՞ Շուշիում, տնտեսական առումով ձեռնտու եւ բնակչության աշխատատեղի խնդիր լուծող: Քաղաքապետը տեսնում էր Շուշիի ապագայի պատկերում, ասենք, տրիկոտաժի կամ քաղցրավենիքի արտադրություն, համենայն դեպս այնպիսիք, որ Շուշիի ներկա լավագույն էկոլոգիական վիճակի համար վտանգավոր չեն լինի: Իսկ, օրինակ, կաթի գործարան հնարավոր չի լինի, որովհետեւ շրջակա (Շուշիի վարչական տարածքի) գյուղերի անասունը այնքան քիչ է, որ դրա անհրաժեշտությունն առաջանա, բացի դրանից՝ կես ժամվա ճանապարհ Ստեփանակերտում կա կաթի արտադրություն: Փաստորեն՝ Ստեփանակերտի մոտ լինելը նպաստել է Շուշիի ղեկավարության մեջ այն կարծիքի ձեւավորմանը, որ ավելի լավ է Շուշին փոքր, էկոլոգիապես մաքուր, մշակութային եւ զբոսաշրջության կենտրոն լինի, իսկ այն, ինչ չես գտնի այստեղ, մոտիկ Ստեփանակերտում կգտնվի: Բարձրաձայն հենց այսպես չի ձեւակերպվում, բայց բոլոր զրույցները իշխանության ներկայացուցիչների հետ այս կարծիքն էին ամրապնդում:

Մշակույթի նախարարությունն էլ տեղափոխվելու է այստեղ (այժմ նորոգվող Մարիամաց օրիորդաց վարժարանի պատմական շենք, դասական համակարգի շենքն է սարքվում՝ մոտակա տարիներին կտեղափոխվեն, այս մաների մտածելակերպը շատ է փոխվել, անկեղծ ասած՝ էն օգնությունները ավարտվել են, բայց մեծ մասը մտածում է, որ իրենք պետք է չաշխատեն, իսկ պետությունն առանց աշխատելու պարտավոր է իրենց պահել: Ես համոզված եմ, որ այդ «բողոքողների» մեծամասնությունն այդպիսի մարդիկ են: Իննսնական թվականների օգնությունները մեզ մի քիչ փչացրել են, սարքել են ծույլ», մեր կարծիքին թերահավատ մոտեցավ քաղաքապետը: Ոչ, մենք մարդկանց չէինք ընտրում, խոսքի էինք բռնվում ամեն տեղ եւ ամեն մարդու հետ, մեր վերեւի նշածը կենտ կարծիքներ չէին, ընդհանուր տրամադրությունն էր սովորական, պաշտոնական կառույցներում չաշխատող մարդկանց: Իսկ քաղաքապետն ասում էր, որ վերջին երեք-չորս տարիներին Շուշիի նկատմամբ ուշադրությունը փոխվել է, մինչեւ այդ սխալ քաղաքականություն էր՝ չվերականգնել Շուշին, բայց արդեն երեք տարի Շուշին Արցախի կառավարության ուշադրության կենտրոնում է, բոլոր նորությունները այդ տարիների հետ են կապվում:

Միջին աշխատավարձը Շուշիում հիսուն-վաթսուն հազար դրամ է, ինչն, իհարկե, քիչ է, մանավանդ այստեղ համարյա նույն երեւանյան գներն են, բայց միջոցներ որոնվում են եկամուտներն ավելացնելու, զբոսաշրջության կենտրոն դարձնելը դրանցից մեկն է:

Չգիտենք՝ ե՞րբ կդառնա Շուշին զբոսաշրջության կենտրոն կամ կդառնա՞ արդյոք, սակայն սովորական շուշեցին ապրում է այնպես, ինչպես Հայաստանի ծայրամասերում ապրողը. խանութներում պարտքի մատյաններ կան, քաղաքային կյանքն ու ցածր աշխատավարձերը իրար չեն բռնում, եւ շուշեցին հաճախ է հույսը կապում տնամերձի ու բոստանի հետ:

Կշարունակենք:

**142-Ի ՄԵՋ՝ 92-ՐԴ ՏԵՂՈՒՄ**

# Հայաստանի մրցունակությունն աճել է 6 կետով

## *Մրցունակության հիմնական թերությունները մրցակցային դաշտում են*

**«Տնտեսություն եւ արժեքներ» հետազոտական կենտրոնի տնօրեն Մանուկ Հերգնյանը երեկ ներկայացրեց Հայաստանի մրցունակության զեկույցը ըստ Համաշխարհային տնտեսական ֆորումի զեկույցի: 2011/21 զեկույցում մեր երկիրն առաջընթաց է արձանագրել 6 տեղով եւ 142 երկրների մեջ, նախորդ տարվա 98-ի փոխարեն զբաղեցնում է 92-րդ տեղը: Խոսելով այս ցուցանիշի մասին՝ Մանուկ Հերգնյանը տեղեկացրեց, որ մրցունակության ցուցիչը որոշվում է 110 ցուցանիշների վերլուծությամբ 12 հենասյուների հիման վրա:**

**Հայաստանը առաջընթաց է արձանագրել 12 հենասյուներից 10-ում՝ ինստիտուտներ, ենթակառուցվածքներ, ապրանքների շուկայի արդյունավետություն, աշխատուժի շուկայի արդյունավետություն, ֆինանսական շուկայի արդյունավետություն, տեխնոլոգիական պատրաստվածություն, շուկայի չափ, գործարարության կատարելագործում, նորարարություն: Փոքր-ինչ նվազել են առողջապահություն եւ տարրական կրթություն եւ զգալիորեն՝ մակրոտնտեսական կայունություն հենասյուները: Այդ հենասյուներից առանձին բաղադրիչների փոփոխության մասին խոսելով՝ «Տնտեսություն եւ արժեքներ» կենտրոնի տնօրենը առանձնացրեց պետական կառավարման բեռի թափանցիկության, բջջային կապի բաժանորդագրության մեծացման, հարկային քաղաքականության բարելավման, վարկերի հասանելիության ավելացման, ինտերնետի օգտագործման ընդլայնման ցուցանիշները: Իսկ մակրոտնտեսական կայունության հենասյան ցուցիչի նվազման վրա էապես ազդել է գնաճի բարձր ցուցանիշը:**

**Զարգացման նույն մակարդակի վրա գտնվող, այսինքն՝ ԱՊՀ երկրներից, մրցունակության ցուցիչով Հայաստանը առաջ է անցել Մոլդովայից (93-րդ տեղ), Տաջիկստանից (105-րդ տեղ), Ղրղզստանից (126-րդ տեղ): Մինչդեռ հետ ենք մնում Ադրբեջանից (55-րդ տեղ), Ռուսաստանից (66-րդ տեղ), Ղազախստանից (72-րդ տեղ), Ուկրաինայից (82-րդ տեղ), Վրաստանից (88-րդ տեղ): Այդուհանդերձ, մեկ տարվա ընթացքում արձանագրած 6 կետով Հայաստանի մրցունակության աճը այս տարվա ընթացքում ամենամեծ աճերից է:**

**Մանուկ Հերգնյանը տեղեկացրեց, որ զեկույցի համար հիմք են հանդիսացել միջազգային կառույցներից եւ ազգային վիճակագրական ծառայությունից ստացած վիճակագրական վերջին տվյալները, որոնք վերաբերում են 2010-ի արդյունքներին: Բացի դրանից, հարցվել են տարբեր ոլորտներ ներկայացնող 110 ընկերությունների ղեկավարներ: Հարցումներ անցկացվել են այս տարվա մարտ-մայիս ամիսներին:**

**Հարցին, թե արդյո՞ք Ադրբեջանի գործարարները կարող են ազատ արտահայտել իրենց մոտեցումները նույն հարցերում, ինչպես հայ գործարարները, Մանուկ Հերգնյանը պատասխանեց, որ Ադրբեջանի գործարարների պատասխանների առումով սուբյեկտիվ գործոնը կա: Սակայն օբյեկտիվ գործոններից Ադրբեջանը մակրոտնտեսական կայունության աշխարհում լավագույն ցուցանիշներից մեկն ունի:**

**«Հարկային բարեփոխումներն ազդե՞լ են մեր երկրի մրցունակության ցուցիչի վրա»՝ «Ազգի» տված հարցին «Տնտեսություն եւ արժեքներ» հետազոտական կենտրոնի տնօրենը դրական պատասխանեց, ասելով, որ հարկային քաղաքականության ազդեցությունը 19 կետով է բարելավվել, պետական կարգավորման բեռը՝ 39 կետով եւ պետական քաղաքականության թափանցիկությունը՝ 18 կետով:**

**Զեկույցում Հայաստանի արձանագրած կտրուկ առաջընթաց ցուցանիշներից արժանահիշատակ են բջջային կապի բաժանորդագրման ավելացումը 48 կետով, որի արդյունքում մեր երկիրը զբաղեցնում է 33-րդ տեղը: Ինտերնետ օգտագործողների թիվն ավելացել է 48 կետով, եւ այժմ Հայաստանը 68-րդն է 142 երկրների մեջ:**

**Ի դեպ, բջջային կապի բաժանորդագրությունը նաեւ Հայաստանի ուշագրավ առավելություններից մեկն է: Մեր երկրի ուշագրավ առավելություններից են մալարիայի ազդեցության բացակայությունը գործարարության վրա եւ մալարիայի դեպքերի քանակը, որոնց ցուցանիշներով առաջինն ենք: Իսկ առավել լուրջ ուշագրավ առավելություններից հարկ է նշել նաեւ նոր բիզնես սկսելու անհրաժեշտ գործընթացների քանակը, մաքսադրույքների չափը:**

**Հայաստանի մրցունակության ուշագրավ թերությունները շարունակում են մնալ նույնը՝ մրցակցության ուժգնության, հակամենաշնորհային քաղաքականության արդյունավետության, շուկայում գերիշխող խմբերի առկայության խնդիրները, ապա մաքսային գործընթացների բեռը:**

**Վերջում նշենք, որ աշխարհի ամենամրցունակ երկիրը Շվեյցարիան է, 2-րդ տեղում Սինգապուրն է, 3-րդ տեղում՝ Շվեդիան, 4-րդը՝ Ֆինլանդիան եւ միայն 5-րդը՝ ԱՄՆ-ն:**

ԱՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

# Հայաստանի 3 սահմանային անցակետերի բարեփոխում

ԱԱԽ քարտուղար **Արթուր Բաղդասարյանն** ընդունել է Հայաստանում ՄԱԿ-ի մշտական համակարգող, ՄԱԶԾ մշտական ներկայացուցիչ **Դաֆինա Գերչեւային**:

Տիկին Գերչեւան ներկայացրել է Հայաստանի 3 սահմանային անցակետերի բարեփոխման ծրագրի իրականացնող գործընկեր ՄԱԶԾ-ի կողմից կատարված աշխատանքի ընթացքը՝ նշելով, որ 3 սահմանային անցակետերի բարեփոխման նախագծահաշվարկային աշխատանքներն ավարտված են եւ առաջիկայում հայտարարվելու է շինարարական աշխատանքների մասնակցության միջազգային մրցույթ:

Արթուր Բաղդասարյանն ընդգծել է Եվրոմիության չափանիշներին լիովին համապատասխանող սահմանային անցակետեր ունենալու կարեւորագույն առաջնահերթությունն առավելագույնս սեղմ ժամկետներում կենսագործելու անհրաժեշտությունը:

Հանդիպման ընթացքում քննարկվել են Հայաստան-ՄԱԶԾ համագործակցությանը վերաբերող այլ հարցեր:

# Apple ընկերությունն առանց Սթիվ Ջոբսի

## *Ստեղծագործ մտքի տեր մագնատը համալսարանական կրթություն չի ստացել, բայց գտնում է, որ գիտելիքի հետեւից վազքը պարտադիր է*

***Օգոստոսի 24-ին ամերիկացի գործարար-մագնատ եւ գյուտարար Սթիվ Ջոբսը հայտարարեց, որ հրաժարվում է անհատական համակարգիչների մի ամբողջ շարք մշակած Apple ընկերության (կազմավորված 1976-ին իր, Սթիվ Վոզնիակի, Մայք Մարկկուլայի եւ ուրիշների կողմից) գործադիր տնօրենի իր պաշտոնից, եւ առաջարկում է իր փոխարեն այդ պաշտոնում նշանակել Թիմ Կուկին. իր իսկ խնդրանքով նա այժմ զբաղեցնում է նույն ընկերության տնօրենների վարչության նախագահի պաշտոնը:***

***Ստորեւ թարգմանաբար ներկայացնում ենք այս նշանավոր անհատականության հետաքրքրական կյանքի մասին մանրամասնություններ:***

### Վաղ տարիներ

Ամբողջական անունով Սթիվն Պոլ Ջոբսը ծնվել է 1955 թվի փետրվարի 24-ին Սան Ֆրանցիսկոյում: Ծնողների ամուսնացած չլինելու պատճառով նրան որդեգրել են Մաունթին Վյուում (Կալիֆոռնիա) ապրող Պոլ եւ Կլարա Ջոբսերը: Կլարայի աղջկական ազգանունը եղել է Հակոբյան: Զույգը հետագայում որդեգրել է նաեւ մի աղջիկ զավակի, որին անվանել է Պատտի:

Ջոբսի կենսաբանական ծնողները եղել են Աբդուլֆաթթահ Ջոն Ջանդալին՝ սիրիացի մի մահմեդական Հոմսից, որը հետագայում դարձել է քաղաքագիտության դասախոս, եւ Ջոան Սիմփսոնը (ծնունդով Շիբել)՝ ամերիկացի ուսանողուհին, որը հետագայում դարձել է խոսակցական լեզվի ախտաբան: Նրանք հետագայում ամուսնացել են եւ ծնունդ տվել Ջոբսի կենսաբանական քրոջը՝ Մոնա Սիմփսոնին, որը հետագայում դարձել է վիպասան: Ամուսնանալուց հետո ցանկացել են վերականգնել իրենց ծնողական իրավունքները:

Ջոբսը հաճախել է Կուպերտինոյի «Ջունիոր» եւ «Հոմստեդ» ավագ դպրոցները, ինչպես նաեւ ներկա գտնվել Պալո-Ալտոյի (Կալիֆոռնիա) «Հյուլետ-Պակարդ» ընկերությունում կազմակերպված դասախոսություններին: Շուտով այնտեղ աշխատանքի է տեղավորվել եւ գործակցել Սթիվ Վոզնիակի հետ: Ավագ դպրոցն ավարտելուց հետո ընդունվել է Պորտլենդի (Օրեգոն) «Ռիդ» քոլեջը, բայց ընդամենը մեկ կիսամյակ անց դուրս է եկել ուսման վարձի հետ կապված խնդիրների պատճառով եւ շարունակել է պարզապես որոշ դասախոսությունների (ինչպես գեղագրություն) ներկա գտնվել: Այդ ընթացքում նա ընկերների տանը հատակին է քնել եւ ուտելիքի համար փող հայթայթել կոկա-կոլայի շշեր հանձնելով: Շաբաթական մեկ անգամ էլ՝ կիրակի օրերը ձրի ճաշել է «Հարե Քրիշնա» տաճարի ճաշարանում:

Կալիֆոռնիա է վերադարձել 1974-ի աշնանը եւ Վոզնիակի հետ սկսել հաճախել «Հոում բրու» համակարգչային ակումբի հանդիպումներին: Որպես տեխնիկ աշխատանքի է անցել տեսախաղերի արտադրության հայտնի «Աթարի» ընկերությունում, նպատակ ունենալով փող հավաքել եւ Հնդկաստան մեկնել «հոգեկան անդորր գտնելու համար»: Հնդկաստանից վերադարձել է որպես բուդդայականության հետեւորդ՝ մազերը սափրած, ավանդական հնդկական շորերով, եւ աշխատանքի վերընդունվել «Աթարի» ընկերությունում, որտեղ նրան հանձնարարել են ստեղծել «Բրեյքաութ» խաղի հաղորդիչների շղթայալար սխեման:

### Կարիերան Apple-ում եւ այլ ընկերություններում

Սթիվ Ջոբսը, Սթիվ Վոզնիակը եւ Ռոնալդ Ուեյնը մարկետինգի մասնագետ եւ ինժեներ Ա. Մայք Մարկկուլայի ֆինանսավորմամբ 1976-ին հիմնել են Apple ընկերությունը: Ջոբսը եւ Վոզնիակը իրար հանդիպել էին 1971-ին, երբ համապատասխանաբար 16 եւ 21 տարեկան էին: Վոզնիակը հակեր էր՝ լեհ-գերմանացի ծնողների զավակ: Ջոբսի մտահղացմամբ եւ խորհրդով Վոզնիակը մի համակարգիչ է հավաքել եւ վաճառել:

Apple-ի ընդարձակումով պահանջ է զգացվել նոր մարդկանց հավաքագրել: Կիսահաղորդիչների ազգային կենտրոնից Մայք Սկոտը ընդունվել է որպես գործադիր տնօրեն: Այնուհետեւ Ջոբսին հաջողվել է Ջոն Սկալիին հրապուրել եւ «Պեպսի կոլա» ընկերությունից 1983-ին հրավիրել որպես հաջորդ գործադիր տնօրենը:

Նա նրան ասել է. «Ուզում ես ամբողջ կյանքումդ շաքարաջուր վաճառե՞լ, թե՞ ինձ հետ գալ եւ վերափոխել աշխարհը»: Հաջորդ տարի՝ 1984-ի հունվարի 24-ին, բաժնետերերի տարեկան հավաքի ժամանակ «զգացմունքային» Ջոբսը ներկայացրել է «Մակինթոշ» անհատական համակարգիչների նոր ապրանքանիշը՝ «բաբելոնյան խառնաշփոթություն» առաջացնելով դահլիճում: Ջեֆ Ռասկինի սկսած գործը, որ հետագայում Ջոբսը զարգացրել էր, մեծ հաջողություն արձանագրեց շուկայում, հատկապես իր գրաֆիկական, պատուհանային, օգտագործողի համար դյուրամատչելի հատուկ համակարգի շնորհիվ:

Չնայած Ջոբսի հմայիչ արտաքինին եւ հորդորող բնավորությանը, որոշ աշխատակիցներ նրան բավական դյուրաբորբոք են համարել: 1984-ի վերջերին պահանջարկի խիստ անկումի հետեւանքով Սկալիի հետ տարաձայնություններ են առաջացել, եւ 1985-ի մայիսին «Մակինթոշ» բաժնի վարիչի պարտականություններից ազատել են Ջոբսին:

Որոշումը չի հուսահատեցրել նրան: Ընդհակառակը, նոր մտահղացումների արդյունքում, օգտագործելով CERN-ում (հետազոտական աշխատանոց Շվեյցարիայում, որտեղ հայտնագործվել է համաշխարհային ցանցը) Թիմ Բարներզլիի NeXT-ը, նա հիմնել է «NeXT Computer» ընկերությունը, որը տեխնոլոգիական տեսակետից ավելի առաջատար էր: Բայց գնային իր բարձր արժեքի հետեւանքով լայն տարածում չի գտել: Ջոբսը այն հիմնականում գիտական-ակադեմիական շրջանակներում է «շուկա հանել» եւ 50 հազար մեքենա վաճառելուց հետո, ամբողջովին անցել ծրագրերի մշակմանը եւ թողարկել NeXT STEP/Intel-ը: 1986-ին նա «Լուկաս ֆիլմզ» ընկերությունից 10 միլիոն դոլարով գնել է գրաֆիկական բաժանմունքը եւ այն հետագայում վերանվանել «Պիքսար»:

Նոր ընկերությունը նա Սան Ռաֆայելից (Կալիֆոռնիա) տեղափոխել է Էմերիվիլ (դարձյալ Կալիֆոռնիա) եւ «Դիզնեյի» հետ համագործակցելով 1995-ին թողարկել մեծ հաջողություն արձանագրած «Toy Story» (Զվարճալի պատմություն) համակարգչային շարժապատկերումը:

Հաջորդ տասնհինգ տարիների ընթացքում «Պիքսարի» ստեղծագործ առաջնորդ Ջոն Լասեթերի ջանքերի շնորհիվ թողարկվել են նորանոր «հիթեր»՝ «A Bug's Life»-ը (1998), «Toy Story-2»-ը (1999), «Monsters, Inc.»-ը (2001), «Finding Nemo»-ն (2003), «The Incredibles»-ը (2004), «Toy Story-3»-ը (2010) եւ այլն: Վերջին երեքն արժանացել են «Լավագույն անիմացիոն ֆիլմ» մրցանակին, որը 2001 թվից «Օսկարի» անվանակարգերում է տեղ գտել:

2004-ին համագործակցության պայմանագրի ավարտին Ջոբսի բանակցությունները «Դիզնեյի» գործադիր տնօրեն՝ Մայքլ Այզների հետ հաջող ավարտ չեն ունեցել, եւ մինչ Ջոբսը նոր գործընկեր էր փնտրում, Այզներին փոխարինելու է եկել Բոբ Իգերը, որն էլ անմիջապես վերականգնել է խզված հարաբերությունները:

2006-ի հունվարի 24-ին Ջոբսն ու Իգերը հայտարարել են, որ «Դիզնե-





յը» համաձայնել է 7.4 միլիարդ դոլարով գնել «Պիքսարը»: Ջոբսը դարձել է «Դիզնեյ» ընկերության ամենամեծ փայատերը՝ արժեթղթերի մոտ 7 տոկոսի տերը, որը 4-6 անգամ ավելի էր, քան Այզների եւ նույնիսկ Դիզնեյ ընտանիքի անդամ Ռոյ Դիզնեյի ունեցած բաժնից:

Մինչ այդ, 1996-ի ավարտին Apple-ը 429 միլիոն դոլարով գնել էր NeXT-ը եւ Ջոբսը վերադարձել էր իր իսկ հիմնած (ուրիշների հետ) ընկերությունը, եւ Ջիլ Ամելիոյի փոխարեն դարձել ընկերության դե ֆակտո գլխավոր տնօրենը: Նա մի շարք ծրագրեր է իր ավարտին հասցրել 90-ականների վերջերին, ինչպես, օրինակ՝ Newton-ը, Cyberdog-ը եւ OpenDoc-ը:

Նրա ղեկավարության ներքո ընկերությունը մեծապես ընդարձակել է վաճառքի իր ծավալները: Հրապարակ հանելով iMac-ը, iPod-ը, iTunes-ը, iPhone-ը, որոնք յուրաքանչյուրն իր հերթին «հեղափոխություն» առաջացնող եւ ընկերության հեղինակությունը բարձրացնող նորամուծություններ են որակվել:

2011թ. օգոստոսի 24-ին կատարած հրաժարականի հայտարարությունից հետո Apple-ի բաժնետոմսերի արժեքը նվազել է 5 տոկոսով, Դիզնեյինը՝ 1.5 տոկոսով: Տոկոսային ոչ մեծ անկումը պայմանավորված էր նրանով, որ արդեն մի քանի տարի նրա վատառողջության վերաբերյալ լուրերը շրջանառության մեջ էին:

Ըստ Ֆորբսի, նա 43-րդ ամենահարուստ ամերիկացին է 5.1 միլիարդ (2009-ի տվյալներով) դոլարի կապիտալով:

### Ղեկավարը եւ գործելաոճը

Ջոբսի մասին ե՛ւ հիացմունքով են արտահայտվել, ե՛ւ քննադատական խոսքերով:

Մեծապես գնահատել են համոզելու, առեւտուր անելու նրա կատարյալ շնորհքը:

Որպես ղեկավար եղել է պահանջկոտ, երբեմն՝ ագրեսիվ: «Ֆորչն» ամսագիրը նրան դասել է «Ամերիկայի ամենաանճկուն ղեկավարների» շարքում: Նրա գործընկերներից Ջեֆ Ռասկինը մի առիթով ասել է. «Նա հոյակապ թագավոր կդառնար Ֆրանսիայում»՝ նկատի ունենալով նրա հմայիչ ու գերող անձնավորությունը: Իսկ Ֆլոյդ Նորմանը նշել է, որ «Պիքսարում» Ջոբսը «հասուն եւ բարեհոգի ղեկավար էր, որ երբեք չէր միջամտում ֆիլմարտադրողների ստեղծագործական մտահղացումներին»:

Ինքը՝ Ջոբսը, 2007-ի հունվարին կայացած «Մակուորլդ կոնֆերանսի եւ էքսպոյի» բացման առիթով իր արտասանած խոսքերում նշել է. «Ես շատ եմ սիրում լեգենդար հոկեյիստ Ուեյն Գրեցկու հետեւյալ խոսքերը. «Ես չմշկում եմ դեպի այն վայրը, որտեղ հանգրվանելու է տափօղակը, եւ ոչ թե այնտեղ, որտեղ եղել էր նախկինում»:

Ամերիկյան 338 արտոնագրերում կամ արտոնագրային դիմումներում Ջոբսի անունը նշված է կամ որպես գյուտարարի, կամ էլ համագյուտարարի:

Նախագահ Ռոնալդ Ռեյգանը 1984-ին նրան շնորհել է «Տեխնոլոգիաների բնագավառի ազգային մեդալը»: 1987-ին արժանացել է «Հասարակական ծառայության Ջեֆերսոն» մրցանակին՝ 35 տարեկանից ցածր անհատի կողմից կատարված մեծագույն հասարակական ծառայության համար:

Կալիֆոռնիայի կառավարիչ Առնոլդ Շվարցենեգերի հրամանով 2007-ի դեկտեմբերի 5-ին Ջոբսը «մուտք է գործել» պատմության թանգարանի «Փառքի դահլիճ»: 2009-ի օգոստոսին նրան համարել են երիտասարդների շրջանում «ամենապաշտելի ձեռնարկատերը»: Նույն տարվա նոյեմբերին «Ֆորչն» ամսագիրը նրան հորջորջել է «Տասնամյակի գործադիր տնօրենը»: 2010-ի դեկտեմբերին «Ֆայնենշլ թայմսը» նրան «Տարվա մարդ» է ընտրել, իսկ «Թայմ» շաբաթաթերթը բնորոշել է նրան որպես «Մանրահամակարգիչների ամենահայտնի մաեստրոյի»:

Իր հրաժարականից հետո նրան նաեւ համարել են «իր ժամանակի Թոմաս Էդիսոնն ու Հենրի Ֆորդը»:

Նրա մասին երեքմասանոց երկու վավերագրական ֆիլմ է նկարահանել PBS-ը, մեկը 1996-ին՝ «Triumph of the Nerds» (Համակարգչամոլների հաղթանակը) խորագրով, մյուսը՝ 1998-ին «Nerds 2.0.1» (Համակարգչամոլները 2.0.1) վերնագրով: Մի երրորդ վավերագրական ֆիլմ էլ նկարել է Նոա Ուայլը 1999-ին «Pirates of Silicon Valley» (Սիլիկոնյան հովտի ծովահենները) խորագրով:

### Անձնական կյանքը

Ջոբսը 1991 թվի մարտի 18-ին ամուսնացել է Լորեն Փաուելի հետ: Արարողությունը նախագահել է Ձեն Բուդդիստների վանական Կոբուն Չինո Օտոգավան: Զույգն ունի մեկ որդի եւ երկու դուստր: Ջոբսը նաեւ մի դուստր էլ ունի (ծնված 1978-ին) նկարչուհի Քրիզան Բրենանից, ով սկզբնական շրջանում միայնակ է մեծացրել աղջկան, մինչեւ հետագայում Ջոբսը ընդունել է հայրությունը:

«Բիթլզ» խմբի սիրահար է եղել: «Նրանք մեկը մյուսին լրացնում էին, եւ որպես խումբ նրանք ավելին էին, քան ամեն մեկն առանձին-առանձին: Մեծ գործերը հնարավոր չէ կատարել առանձին: Դրանք խմբակային աշխատանքի արդյունք են», ասել է Ջոբսը:

Ջոբսը 1982-ին մի բնակարան է գնել Նյու Յորքի «Սան Ռեմո» շենքում, որտեղ ապրել են նաեւ Դեմի Մուրը, Սթիվն Սփիլբերգը, Սթիվ Մարտինը եւ դերասանուհի Ռիտա Հեյուորթի դուստրը՝ իշխանուհի Յասմին Աղա խանը: Սակայն երկար ժամանակ վերանորոգելուց հետո 2002-ին վաճառել է U2-ի Բոնոյին: Նա այնտեղ երբեք չի ապրել: 1984-ին մեկ ուրիշ 14-սենյականոց իսպանական առանձնատուն է գնել Վուդսայդում (Կալիֆոռնիա), որտեղ մոտ 10 տարի ապրել է առանց կարգին կահավորելու:

Նախագահ Քլինթոնը 1996-ին ճաշել է նրա եւ 14 այլ գործադիր տնօրենների հետ եւ հետագայում Ջոբսին հրավիրել Սպիտակ տուն, որտեղ նա գիշերն անցկացրել է «Լինկոլն» ննջարանում: Քաղաքական հայացքներով դեմոկրատ է: Բացի ձկնեղենից այլ կենդանիների միս չի ճաշակում: Նախասիրած ավտոմեքենան արծաթագույն «Մերսեդեսն» է:

Ինչ վերաբերում է առողջությանը, անհանգստությունները ուղեկցել են 2004 թվի կեսերից, երբ բժիշկները չարորակ ուռուցք են հայտնաբերել ենթաստամոքսային գեղձում: Հուլիսին վիրահատական միջամտությամբ հեռացրել են ուռուցքը եւ հայտարարել են, որ առողջ է եւ կյանքին վտանգ չի սպառնում: Բայց նրա բացակայությունները շարունակվել են եւ շահարկվել այն աստիճանի, որ 2008-ի օգոստոսի 28-ին «Բլումբերգ» ընկերության լրատվական ծառայությունը 2.500 բառերից կազմված մահախոսական է հրապարակել, որը շուտով ստիպված է եղել հերքել: Սեպտեմբերին կայացած «Let's Rock» հանդիսությանը ելույթ ունենալով Ջոբսը մեջբերել է Մարկ Տվենի խոսքերը. «Մահվանս մասին լուրերը չափազանցված են»: 2009-ի ապրիլին Մեմֆիսում (Տենեսի) ենթարկվել է լյարդի փոխպատվաստման վիրահատության: 2011-ի օգոստոսի 24-ին գրած հրաժարական-նամակում նշել է, որ «այլեւս չի կարող շարունակել իր պարտականությունները որպես գլխավոր տնօրեն»:

Պատրաստեց
ՀԱԿՈԲ ԾՈՒԼԻԿՅԱՆԸ

# Թուրքիան ընդդեմ Իսրայելի, Կիպրոսի եւ Հունաստանի

## «Բարբարոսա» ծրագրի մասին



Քաղաքական նոր ռազմավարության շրջանակներում Թուրքիայի իշխանությունները հայտարարել են, որ զգալիորեն ընդլայնում են երկրի ծովուժի ներկայությունը Միջերկրական ծովի արեւելյան մասում:

Նոր ծրագիրն ստացել է «Բարբարոսա» անվանումը: Սակայն, ի տարբերություն ԽՍՀՄ-ի դեմ ուղղված նացիստական համանուն ծրագրի, որն այդպես էր կոչվել ի պատիվ կայսր Ֆրիդրիխ Բարբարոսայի, թուրքական ծրագիրն անվանակոչվել է ի պատիվ թուրք ծովակալ Խայիր ադ Դին Բարբարոսայի, որը ծովահենային շատ մեծ նավատորմ էր ղեկավարել Միջերկրական ծովում:

Սեւ եւ Մարմարա ծովերից դեպի Միջերկրական եւ Էգեյան ծովեր թուրքական ծովուժի տեղափոխման շրջանակներում վերջին երկու ծովերում կհայտնվեն երկուական հակասուզանավային ֆրեգատ եւ հրթիռային կորվետ (հետախուզական նավ), ինչպես նաեւ օժանդակ նավեր:

Թուրքիայի արտգործնախարար Ահմեդ Դավութօղլուն շաբաթ օրը հայտարարեց, որ իր երկիրը մտադիր է Միջերկրական ծովի արեւելքում ռազմական ներկայությունն ուժեղացնել «նավագնացության ազատությունը պաշտպանելու համար»: Դավութօղլուի խոսքերով՝ այդ ջրատարածքում կհերթապահեն թուրքական ռազմանավեր, որոնք, ի թիվս այլ առաջադրանքների, կուղեկցեն այն նավատորմիղների նավերին, որոնք կձգտեն «ճեղքել» Գազայի հատվածի ծովային շրջափակումը:

Սակայն Թուրքիայի կառավարության ներկայացուցիչները միայն Իսրայելին չէ, որ սպառնում են: Կառավարությունում Եվրոմիության հետ կապերի գծով նախարար Աջման Բաքիսը սեպտեմբերի 6-ին հայտարարեց, որ թուրքական ծովուժը Կիպրոսի Հանրապետությանը թույլ չի տա գազ եւ նավթ որոնել Միջերկրական ծովում: Ավելի վաղ ամերիկյան Noble Energy եւ իսրայելական «Դելեկ» ընկերությունները հայտարարել էին, որ երկրաբանականհետախուզական աշխատանքներ են սկսում Կիպրոսի տնտեսական ջրերում:

Թուրքիան չի ճանաչում տնտեսական գոտիների սահմանների վերաբերյալ Իսրայելի եւ Լիբանանի հետ Կիպրոսի ստորագրած համաձայնագրերը, պնդելով, թե դրանք խախտում են այսպես կոչված Հյուսիսային Կիպրոսի թուրքական հանրապետության իրավունքները:

Բաքիսից հետո Կիպրոսի հասցեին սպառնալիքներով հանդես եկավ Թուրքիայի վարչապետ Ռեջեփ Թայիփ Էրդողանը, նշելով, որ թուրքական ռազմանավեր կուղարկվեն Իսրայելի եւ Կիպրոսի սահմանների մոտ:

Թուրքիայի դիրքորոշումը հարուցել է Աթենքի ցասումնալի հակազդեցությունը: Հունաստանի կառավարությունը դատապարտել է Կիպրոսին հասցեագրված թուրքական սպառնալիքները: Իսրայելական լրատվամիջոցները նշում են, որ Ահմեդ Դավութօղլուի հռչակած «հակամարտությունների մեղմացման» քաղաքականությանը հակառակ, վերջին ժամանակներս Թուրքիան գժտվել է իր բոլոր հարեւանների հետ (Իսրայել, Հունաստան, Կիպրոս, Սիրիա, Իրան): Էրդողանի կառավարության քաղաքականությունը հանգեցրել է նաեւ բուն Թուրքիայի քրդաբնակ տարածքներում ռազմական գործողությունների սաստկացմանը:

Ինչ վերաբերում է Իսրայելին, նա շարունակում է ակտիվորեն ամրապնդել հարաբերությունները Բալկանյան թերակղզու երկրների հետ: Սեպտեմբերի 4-ին Իսրայել այցելեց Հունաստանի պաշտպանության նախարար Պանոս Բեգլիտիսը, որը Իսրայելի պաշտպանության նախարար Էհուդ Բարաքի հետ ստորագրեց անվտանգության ոլորտին առնչվող նոր համաձայնագրեր: Դրանք անցյալ տարեվերջին վարչապետներ Գեորգիոս Պապանդրեուի եւ Բենիամին Նաթանյահուի ձեռք բերած պայմանավորվածությունների շարունակությունն են:

# Ըստ «Շպիգելի»՝ Գերմանիան 2001-ին պարտադրել է իր մասնակցությունն Աֆղանստանի պատերազմին




2001-ին արեւմտյան դաշնակիցների Աֆղանստան կատարած ներխուժման ժամանակ Գերհարդ Շրյոդերի կառավարությունը բառացիորեն պարտադրել է իր ռազմական օգնությունն ԱՄՆ-ին, թեեւ վերջինս հակաթալիբյան գործողությանը գերմանացիների մասնակցության անհրաժեշտություն բնավ չէր տեսնում: Այդ մասին հաղորդում է գերմանական «Շպիգել» շաբաթահանդեսը:

Հրատարակությունը վկայակոչում է իր լրագրողների հետազոտության արդյունքները: Վերլուծվել են բազմաթիվ փաստաթղթեր, այդ թվում՝ դաշնային կանցլերի գերատեսչության զեկույցներ, ԱԳՆ հեռագրեր, գերմանացի պաշտոնական անձանց նամակագրությունը ԱՄՆ նախագահ Ջորջ Բուշի հետ:

«Շպիգելը» մասնավորապես բերում է քաղվածք ԱՄՆ-ում Գերմանիայի դեսպանի եւ պետքարտուղար Քոլին Փաուելի 2001 թ. սեպտեմբերի 12-ի զրույցից: Դեսպանի հարցին ի պատասխան՝ Փաուելն ասել է, որ ԱՄՆ-ը Գերմանիայի «որեւիցե կոնկրետ օգնության կարիք չունի»:

Նաեւ մեջբերվում են այն ժամանակվա գերմանացի պաշտոնյաների խոսքերը, որոնք կասկածի տակ են առնում Աֆղանստանի պատերազմին Գերմանիայի մասնակցության նպատակահարմարությունը:

Այսպես, կանցլեր Շրյոդերի անվտանգության հարցերի գծով նախկին խորհրդական Միխայել Շտայները, որը ներկայումս Աֆղանստանի գծով կառավարության լիազոր ներկայացուցիչն է, հայտարարել է. «Միջոցները չհաշվարկելով՝ մենք հանդգնորեն մեզ առաջադրեցինք անիրական նպատակներ եւ խոստացանք անկատարելին»:

Նախկին ներքգործնախարար Օտտո Շիլին նշել է. «Աֆղանական առաքելության նկատմամբ իմ հոռետեսությունն աճել է: Մենք ներքաշվեցինք մի հակամարտության մեջ, որն անխուսափելիորեն հանգեցրեց նոր սխալների: Երբ որեւէ ահաբեկչի սպանելու համար գյուղ են ռմբակոծում, սպանված մեկ ահաբեկչի փոխարեն հայտնվում են հազար նորերը»:



# Քաղաքական աշխարհաժողով Յարոսլավլում



Սեպտեմբերի 7-ին ՌԴ Յարոսլավլ քաղաքում բացվել է 3-րդ Համաշխարհային քաղաքական ֆորումը, որին մասնակցում են 32 երկրների պետական եւ հասարակական գործիչներ, գործարարներ եւ գիտնականներ: Այս տարի միջոցառումն անցակցվում է ՌԴ նախագահ Դմիտրի Մեդվեդեւի հովանավորությամբ: ԻՏԱՌ-ՏԱՍՍ-ը հաղորդում է, որ համաժողովի մասնակիցներին հետաքրքրում են ժողովրդավարական երկրների խնդիրները «սոցիալական բազմազանության» ժամանակաշրջանում:

Աշխարհաժողովի օրակարգում են արդյունավետ տնտեսության եւ սոցիալական արդարության, նորացումների եւ ավանդույթների, մարդու իրավունքների եւ ընդհանուր անվտանգության ապահովման հակասությունները: Ռուսաստանի դեպքում գլխավոր թեման քաղաքացիների տնտեսական անհավասարության խնդիրն է:

Նախագահ Մեդվեդեւի ելույթում խիստ քննադատական գնահատական տրվեց ՌԴ բնակչության շերտավորմանը: ՌԴ Հասարակական պալատի անդամ, լրագրող **Վալերի Ֆադեեւը** կարծում է, որ երկրի բնակչության սոցիալական շերտավորումը ամենից ընդգծվածն է Եվրոպայում:

Յարոսլավլում «Ընդհանուր աշխարհաքաղաքական մարտահրավերներ» թեմայով զեկուցում կկարդա ԱՄՆ նախագահի ազգային անվտանգության հարցերի գծով նախկին խորհրդական Զբիգնեւ Բժեզինսկին: Ելույթներ կունենան նաեւ Մոսկվայի քաղաքապետ Սերգեյ Սոբյանինը, ՌԴ մարդու իրավունքների լիազոր ներկայացուցիչ Վլադիմիր Լուկինը, ՌԴ ԿԸՀ-ի նախագահ Վլադիմիր Չուրովը, Սահմանադրական դատարանի նախագահ Վալերի Զորկինը, ՅՈՒՆԵՍԿՕ-ի գլխավոր տնօրեն Իրինա Բոկովան եւ ուրիշներ:

# Քանի դեռ Իսրայելը «մեղա չի եկել»

Քանի դեռ Իսրայելը չի բավարարել Թուրքիայի պահանջները, երկու երկրների հարաբերությունները չեն կարող նորմալանալ: Այսպիսի հայտարարություն է արել Թուրքիայի վարչապետ Ռեջեփ Թայիփ Էրդողանը Իսպանիայի վարչապետ Խոսե Լուիս Սապատերոյի հետ համատեղ ասուլիսում:

Ըստ թուրքական լրատվամիջոցների՝ Էրդողանը, իսպանացի գործընկերոջ հետ քննարկելով Թուրքիայում ռադիոլոկացիոն համակարգի տեղակայման հարցը, անդրադարձել է նաեւ իսրայելյան հարցին, նշելով. «Մենք առկախել ենք Իսրայելի հետ ռազմական բոլոր համաձայնությունները, առեւտրային հարաբերությունները՝ ուղղված երկու երկրների ռազմական արդյունաբերությանը»:

Էրդողանի իսպանացի գործընկերն իր աջակցությունն է հայտնել Թուրքիային այդ հարցում, շեշտելով, թե «մենք բոլորս ենք տեսել Գազայի հատվածում տեղի ունեցածը, ու միջազգային հանրությունը պետք է արժանի պատասխան դա այդ գործողություններին»:

Ա. Հ.

# Պայթյուն Նյու Դելիի գերագույն դատարանի առջեւ

Երեկ առավոտյան ռումբ է պայթեցվել Հնդկաստանի մայրաքաղաք Նյու Դելիի գերագույն դատարանի շենքի առջեւ: Ահաբեկչության հետեւանքով զոհվել են 10 եւ վիրավորվել 50 անձինք: Այդ մասին հաղորդում է BBC-ն՝ վկայակոչելով տեղացի պաշտոնյաներին:

Միջադեպը տեղի է ունեցել դատարանի գլխավոր մուտքերից մեկի մոտ: Այդտեղից ոչ հեռու գտնվում են երկրի խորհրդարանը եւ վարչապետի դիվանատունը: Ոստիկանության հատուկ կոմիսար Դհարմենդրա Կումարի տվյալներով, բավական հզոր պայթուցիկ սարքը դրված է եղել դարպասի մոտ թողնված «դիպլոմատ» պայուսակի մեջ:

Ականատեսներից մեկը նշել է, որ ռումբը պայթել է այն անցակետի մոտ, որտեղ տվյալ պահին մոտ 200 մարդ կար: «Անմիջապես խուճապ սկսվեց, շատերին տարան հիվանդանոցներ», ավելացրել է նա:

Չորեքշաբթին ընդունելության օր է, ուստի դատարանի դարպասի մոտ բազմաթիվ մարդիկ սպասում էին, թե իրենց երբ են անցագրեր տալու: Կոմիսար Կումարի խոսքերով՝ արտակարգ պատահարից անմիջապես հետո մարդկանց տարհանել են դատարանի շենքից: Հատուկ ծառայությունները շրջապատել են շենքը, իսկ հրշեջները զբաղվել են պայթյունի հետեւանքների վերացմամբ: Հնդկաստանի ներքգործնախարարությունը պայթյունի կապակցությամբ անցկացնում է արտակարգ քննություն:

Իշխանությունները կասկածներ ունեն, որ պայթյունի հետ կապված են հնդիկ մոջահեդները, որոնք անցյալում եւս մի շարք ահաբեկչություններ են կատարել երկրի տարածքում:

Այս տարի սա երկրորդ պայթյունն է մայրաքաղաքի գերագույն դատարանի առջեւ: Մայիսի 25-ին ականված ավտոմեքենայի պայթյունից որեւէ մեկը չէր տուժել: Հուլիսին Հնդկաստանի ֆինանսական մայրաքաղաք Մումբայում (Բոմբեյ) որոտացել էր միանգամից մի քանի պայթյուն, որոնց հետեւանքով զոհվել էին 26 եւ վիրավորվել 100-ից ավելի մարդիկ:

# «Ինչ-որ մեկին փնտրելու» ճանապարհին




Իր բանաստեղծություններից մեկում Մանվել Միկոյանը հարցնում է՝ «Որտե՞ղ են երաժիշտները», որը դառնում է իր վերջին ժողովածուի հիմնական լեյտմոտիվը եւ խորագիրը գրքի: Այն խորհրդածությունները, որ չափածոյացրել է հեղինակը հիշյալ ժողովածուում, այսօրվա մտածող անհատի ապրումների դառն արձագանքներ են՝ հայկական իրականությանը կամ անդրադարձներ են հայկական այս ժամանակի, որտեղ քաոս է ու լաբիրինթոս, լավագույն դեպքում մշուշ. համենայն դեպս չկա, չի երեւում ժամանակի առանցքը, այն կորսված կամ մաշված է, որից ծնված անհուսությունը գերակա է զգայական աշխարհի բոլոր շերտերում: Ե՛վ տխուր է, ե՛ւ ճնշող:

Իրականության գույների բանաստեղծական պատկերները խտացած արտահայտություններն են դրանց, որից օտարացողի ու մենակյացի կերպար է ձեւավորվում: Հույսերի երկնագույնը կարծրանում, խեղդվում է որովայնային հառաչից ու մարմինների մեջ՝ կույր, խրվող աչքը տեսնում է ավելին, քանի պետք էր տեսնել: Բաց զգայական աշխարհը արձագանքում է արտաքին երեւույթներին ավելի քան տենդագին, հիվանդության աստիճան, երբ նյարդերը վեր են ածվում ասեղվող մրջնաբույնի... ու չեն թողնում քնել: Սա մազոխի՞զմ է՝ հայկական ժամանակը ապրելու «անհրաժեշտ» բեռ, թե՞ բանաստեղծական սինդրոմ, որի ժանգային տտիպը վաղ թե ուշ վեր է ածվելու տեւական ապրում-վիճակի՝ չթողնելով ապրել պարզ ու հանգիստ: Տողերի վրայով անցնում ու թվում է՝ ճահճի միջով մի կերպ քարշ ես տալիս հոգնած մտքերդ, ընդարմացող ոտքերդ, տիղմը կլլում, քեզ իր մեջ է առնում: Ու դիմադրել-դիմակայելը դառնում է արժանապատվությանդ թիվ 1 խնդիրը:

*Ես ատում եմ իմ նզովյալ մարմինը,*
*քանզի այն օտարացնում է ինձ հոգուս հետ,*
*այրում տրոփող բոլոր հանգույցները:*
*...Ես ատում եմ իմ նզովյալ մարմինը՝*
*Բաղկացած անթիվ ցավերից*
*ու նողկալի տառապանքից՝*
*կոչում, ինչպես անդրդվելի ձանձրույթը,*
*Ես ատում եմ...*
*իմ մարմնի նզովյալ հիշողությունը՝*
*խորտակված երազների*
*սառեցնող արձագանքներից խեղանդամ դարձած*
*զգացմունքների տեղատարափ անձրեւ*
*հեղեղից փլված հույսի դղյակներ...*

Ինչպե՞ս է արթնացնում իր օրը Երկիրը՝ տեսնո՞ւմ է արդյոք ստորոտներում կամ անդունդներում թափառող իր զավակների հյուծվող մարմինները: Ահա եւ 21-րդ դարի Երկիր Նաիրին՝ բանաստեղծի հայացքից գուցե «նեղսրտած», բայց իրական՝ դեմ հանդիման արհավիրքի...

*«...Ժողովուրդ, որ հոգնել է Ազգ դառնալու ցնորային երազանքից,/ որ խռովել է իր նախնիների հողից/ եւ պատրաստ է հող դառնալ օվկիանոսից այն կողմ/ այնտեղ մի քիչ մարդ զգալու պարզունակ մտասեւեռությամբ...*

Ստահակների երփներանգ հիբրիդներ.../ Որ խորթ են ու անհարիր իրենց իսկ անվանն ու արյանը/

Ակնհայտ է հասարակական կյանքի գահավիժումը «ամորձատված գաղափարների» շքեղ ցուցանակներին. քաղաքացիական պարտքը թույլ չի տալիս հեղինակին անտեսել կամ կոծկել իրականության խոցոտվող դեմքը. *«Կիբորգներ են շրջում/հովիտներում բիբլիական/...ուր հոմանուհիները գերադասում են/հարմարավետ որջերը դարավոր թշնամու/ ուր փափուկ Աթոռի համար/ ուրանում են նույնիսկ կաթը սեփական մոր...:*

Կրքերի ջունգլիներում կործանվում, անհետանում է մարդկային գեղեցկությունը՝ նրա հոգու մարմինը, նա վերածվում է հաշվիչ մեքենայի, եւ ծրագիրը՝ մարդուն աշխարհից վերացնելու, անխուսափելիորեն տեսանելի է դառնում:

Մ. Միկոյանի բանաստեղծությունների «Որտե՞ղ են երաժիշտները» ժողովածուն բաղկացած է չափածո չորս շարքերից եւ «Արձակ բանաստեղծություններ» բաժնից: Առաջինը՝ «Երկրորական հումիք բազա», հեղինակի վերաբերմունքն է տիրող իրականությանը՝ սոցիալական-քաղաքական, բարոյական հարթություններով: Շատ ծանոթ պատկերներ ու հոգեվիճակներ ավելի սրում են օրվա տագնապը: Հայ մարդն ու հայկական բարոյականությունը՝ աղճատված, օտարացված, հեռացված ավանդական ըմբռնումներից, նորօրյա կեղտաջրին շատ արագ հարմարված եւ խորը թաղված, գլուխը կորցրած-մարդկային դեմքը կորցրած:

Մի քանի բանաստեղծություններում առկա քաղաքական սատիրան՝ ուղղված գիշատիչների մաֆիային եւ դրա դեմ պայքարող «առանց սահմանների ագռավներին», տխուր ու խուլ բողոք է՝ կեղծ բարեպաշտության, կորցրած խղճի տոնավաճառային ունայնության դեմ: Եվ բնական է մտքերի երբեմն խառնաշփոթը՝ մերթ անտարբերության, մերթ ցավի, մերթ սպասման, մերթ համակերպման, եւ մերթ էլ հեռացումի վիատվող նոտաներով:

Կողոպուտ-բառիս ամենալայն իմաստով, կողոպուտ՝ մարդու բարոյականի, հոգեկան աշխարհի: Ահա ինչի է վերածել հայկական ժամանակը իր քաղաքացուն՝ քայլող դիակներ՝ անհոգի, վաշխառու, դավադիր, վերացել է գութը, անհետացել է սերը. անհայացք աչքերի առաջ կախաղան է բարձրացվում իրենց դավանանքի գլխավոր պատգամը՝ «Սիրեցեք զմիմյանս»-ը:

Բայց այնտեղ՝ օվկիանոսից այն կողմ իրենց գաղջությամբ բավարարված հայեր կան՝ *«լավատեսության քաղցկեղով տառապող»*, իսկ ահա հայրենի քաղաքի հսկայական շենքի՝ դեռ երեկ նշմարվող վերջին պատուհանի լույսն արդեն մարել է: *«Էս անտեր մնացածների կեսը ջհանդամվել է, ո՞ւմից եմ փողն ուզելու»*, սրտնեղում է տարեց կրպակավաճառը: Սոցիալական շարժումը՝ բնակավայրը փոխելու մարդու պարզ ցանկությունը մեզ համար վերածվում է ազգային անվտանգության լուրջ խնդրի՝ աղետի, հողը դատարկվում է, մնացողը հուսահատվում, ծուլանում է, հողը դառնում է ստերջ, անպտուղ: Եվ *«օդն էլ է ապականված/մարդկային գռեհիկ ու լպրծուն առնչությունների ախտով»*: Ախտակիրների քանակը շատանում է, որից փրկության ելքը, չէ՛, հակագազը չէ, այլ՝ դռներդ փակելը եւ սեփական պատյանի մեջ մտնելը: Եւ ահա մենակությունը՝ որպես հոգու կեցություն, 21-րդ դարում վերածվում է աղետի:

Լճանում-թանձրանում են ապրումները, մշուշը տարածվում, անտեսանելի պատ է բարձրանում անհատի եւ հասարակության միջեւ. ձգվում է սպասումի տվայտանքը: «Աստծո ամեն օր», «Ես դեռ ապրում եմ» շարքերում ներանձնական ապրումները մերթ հույսի, մերթ լքումի, մերթ վերագտնող սիրո տրամադրությունների ելեւէջումներ են: Տրիոլետները նույնպես շարունակում են այս նույն նոտաները. *«Այս խոնավ, բորբոսնած քաղաքում,/ ուր նույնիսկ արեւն է կարծես թաց/շողերն են սառում կարկամած/այս խոնավ, բորբոսնած քաղաքում»*:

Հոգեվիճակների անձեւ կերպարները որոշակիանում են արձակ բանաստեղծություններում, մտաձեւերը ավելի հստակ են դառնում, բանաստեղծի հոգեւոր որոնումները ավելի կայուն փուլ են մտնում, հասնում մարդկային գոյության առեղծվածի ունայնության գաղափարին: Սակայն միեւնույնն է՝ մարդու բնածին-նախաէությունը շարունակում է մնալ լավատեսական, նա փորձում է դեռ երազել ու փնտրել. *«Երբեք չհոգնես փնտրելուց: Մենք՝ բոլորս աշխարհ ենք եկել ինչ-որ մեկին փնտրելու համար»*:

Բանաստեղծությունների սույն ժողովածուն տպագրվել է «Վան Արյան» տպագրատանը (2011 թ.), շապիկի՝ բովանդակությանը համահունչ ձեւավորմամբ, ներսի՝ գրաֆիկական աշխատանքներին համապատասխան ընտրությամբ:

**Ս. ԲԱՂԱԼՅԱՆ**

# «Անիմացիոն ֆիլմեր Գերմանիայից» ցուցահանդես

**«Ազգի» ընթերցողներին արդեն տեղեկացրել ենք սեպտեմբերի 14-20-ը Երեւանում կայանալիք «Ռենիմանիա» միջազգային 3-րդ փառատոնի մասին: Փառատոնի շրջանակներում Գերմանիայի դաշնային հանրապետության դեսպանությունը, համատեղ ներկայացնում է «Անիմացիոն ֆիլմեր Գերմանիայից» ցուցահանդեսը: Սեպտեմբերի 10-ին ժամը 13-ին հանդիսավորությամբ Թումո կենտրոնում (Հալաբյան փ. 16) կբացվի ցուցահանդեսը, որը հաջողությամբ ցուցադրվել է շատ երկրներում: Ցուցահանդեսի այցելուները հարուստ պատկերացում կկազմեն գերմանական անիմացիոն կինոմատոգրաֆի մասին: Ցուցահանդեսում զանազան լուսանկարների եւ փոքր ֆիգուրների միջոցով ներկայացվելու են անիմացիոն ֆիլմերի ստեղծման բազմազան եղանակները՝ դասական անիմացիոն տեխնիկայից մինչեւ համակարգչային տեխնոլոգիաների կիրառումը:**

**Մ. Մ.**

# Հայաստանում նշվեց Բրազիլիայի անկախության տոնը



**Երեկ մարդաշատ էր Հայաստանի Ազգային պատկերասրահի Որմնանկարների սրահը: Հյուրերը, որոնց թվում էին Հայաստանում հավատարմագրված դեսպաններ, դեսպանատների աշխատակիցներ, միջազգային ու հասարակական կազմակերպությունների ղեկավարներ, պատգամավորներ, նախարարներ եւ այլ պաշտոնատար անձինք, եկել էին շնորհավորելու մեր երկրում Բրազիլիայի դեսպանին Անկախության օրվա առիթով: Հանդիսությունը բացվեց Բրազիլիայի եւ Հայաստանի հիմների կատարումով, որից հետո ներկաներին իր ողջույնի խոսքը հղեց Հայաստանում Բրազիլիայի դեսպան տկն Մարսելա Նիկոդեմուսը.**

**«Հպարտությամբ նշում եմ, որ վերջին 12 ամիսների ընթացքում մեր երկու երկրների միջեւ հարաբերությունները շատ են սերտացել: Մեր երկկողմանի հարաբերություններում տարբեր կարեւոր զարգացումներ են տեղի ունեցել, սկսած հունվար ամսին ԱԳ նախարար Էդվարդ Նալբանդյանի Բրազիլիա կատարած այցից, որտեղ նախարարը Բրազիլիայի առաջին կին նախագահ Հիլ Մարասետհի պաշտոնի ստանձնման արարողության ժամանակ տարածաշրջանը ներկայացնող միակ բարձրաստիճան ներկայացուցիչն էր»: Դեսպանը նշեց, որ երկկողմանի համագործակցությունն ավելի խորացել եւ ընդլայնվել է առեւտրի ոլորտում: «Մենք վճռական ենք, նշեց դեսպանը, հետամուտ լինելու եւ գտնելու բոլոր այն ուղիները, որոնք շահավետ կլինեն երկու երկրների համար: Ինքնատիպ չթվալու ցանկությամբ ես միշտ նշում եմ, որ Բրազիլիան երկար տարիների պատմություն ունեցող հանրապետություն է, երիտասարդ ազգով, մինչդեռ Հայաստանը երիտասարդ հանրապետություն է, բայց հինավուրց ազգով: Չնայած բոլոր դժվարություններին, մեր երկու ժողովուրդներին հաջողվեց կապեր հաստատել: Առաջին հայերը Բրազիլիա հասան 19-րդ դարի վերջին: Նրանք հաստատվեցին ու տարիների ընթացքում իրենց հետքերը թողեցին մեր երկրում: Բրազիլիայի անկախության եւ Հայաստանի անկախության 20-րդ տարեդարձի կապակցությամբ այսօր մենք ուզում ենք նշել հայ ժողովրդի ներդրումը բրազիլական հասարակության մեջ: Մենք խորապես հավատում ենք, որ ազգերի միջեւ խոր եւ իմաստալից հարաբերությունները հիմնված են ժողովուրդների բարեկամական հարաբերությունների վրա: Ժողովրդավարական հասարակություններում, ինչպիսիք են մեր երկրների հասարակությունները, կառավարության քաղաքականությունն արտացոլում է սեփական ժողովրդի կամքը: Մեր երկիրը քաջալերում է տարբեր ազգերի բարեկամությունը», ասաց դեսպանը եւ քիչ անց ներկաներին հրավիրեց «Հայերի հետքերը Բրազիլիայում» ցուցահանդեսի բացմանը:**

**Հայաստանի Հանրապետության կառավարության անունից արտաքին գործերի փոխնախարար Արման Կիրակոսյանը Բրազիլիայի կառավարությանն ու դեսպանին շնորհավորեց Բրազիլիայի անկախության 189-րդ տարեդարձի առիթով, ցանկացավ հաջողություններ կառավարությանը եւ բարեկեցություն ժողովրդին: Նա նաեւ նշեց, որ Հայաստանի կառավարությունը կշարունակի իր քաղաքականությունը Բրազիլիայի հետ հարաբերությունները ավելի խորացնելու եւ զարգացնելու ուղղությամբ:**

## Բացվեց «Հայերի հետքերը Բրազիլիայում» ցուցահանդեսը

**Բրազիլիայի անկախության 189-րդ եւ Հայաստանի անկախության 20-ամյակին է նվիրված Հայաստանում Բրազիլիայի դեսպանատան եւ ՀՀ մշակույթի նախարարության կազմակերպած ցուցահանդեսը, որը կրում է «Հայերի հետքերը Բրազիլիայում» խորագիրը: Ցուցահանդեսի կարմիր ժապավենը կտրեցին Հայաստանում Բրազիլիայի դեսպան տկն Մարսելա Նիկոդեմուսը եւ մշակույթի փոխնախարար Արթուր Պողոսյանը: Երեք առանձին սրահներում ցուցադրված էին 1880-2011 թթ. Բրազիլիայում հայերի զբաղեցրած ու վարած ազգային, մշակութային, քաղաքական գործունեությունը ներկայացնող լուսանկարներ: Մեկ առանձին սրահում ցուցադրված էին փաստավավերագրական կադրեր, որոնք արտացոլում էին հայերի ապրելակերպը Բրազիլիայում հայտնվելու օրվանից: Հետաքրքրական էր, որ մեկ առանձին պաստառում զետեղված էին 35.000 հայերի ազգանուն-**



**ներ, որոնք հաստատվել են Բրազիլիայում եւ ներկայումս ապրում ու աշխատում են տարբեր բնագավառներում:**

**«Ազգը» զրուցեց Բրազիլիայում հայկական ակումբի ներկայացուցիչ Օննիկ Տամջյանի հետ, որն աշխարհագրություն է դասավանդում հայկական դպրոցներում: Նրանց գերդաստանը ցեղասպանությունից մազապուրծ դեգերել է, հասել Լիբանան, Եգիպտոս, իսկ 1965-ին հաստատվել Սան Պաուլոյում: «Այսօր Բրազիլիայում մոտ 40.000 հայեր են ապրում, որոնք հիմնականում զբաղվում են բիզնեսով ու լավագույն մասնագետ վարպետներ են»:**

**Այսօր բրազիլիայի խորհրդարանում հայերը ունեն մեկ ներկայացուցիչ, դերասան Ստեփան Ներսեսյան, որն էլ ներկայացնում է հայերի հիմնահարցերը: Գործում են հայկական դպրոցներ, կիրակնօրյա դպրոց՝ հայկական եկեղեցուն կից, որտեղ ուսուցանում են հայոց պատմություն, հայ մշակույթ, պատմում էր պրն Տամջյանը:**

**Ցուցահանդեսում ներկայացված նյութերից տեղեկանում ենք, որ հայերը Բրազիլիա են հասել 19-րդ դարի վերջին տասնամյակներում: Նրանց շարքերում էին Գասպարյանները, Քեութենեջյանները, Ռիզկալահ Ջորջ Թահանյանը եւ ինժեներ Միհրան Լաթիֆյանը: Դրանից հետո հայերի մեծաթիվ ներգաղթը Բրազիլիա տեղի է ունեցել 1915-26 թթ. ընթացքում, երբ Առաջին համաշխարհային պատերազմի ջարդերից խույս տալով, հայերը գաղթեցին Բրազիլիա ու հաստատվեցին Ռիո դե Ժանեյրոյի, Պորտո Ալեգրի եւ Սան Պաուլոյի Սանտոս նավահանգիստներում, որտեղ նրանց դիմավորեցին Բրազիլիայում արդեն հաստատված հայ առաջին գաղթականները, որոնք էլ օգնեցին իրենց հայրենակիցներին ոտքի կանգնելու: Նշենք, որ ցուցահանդեսը բաց կլինի մինչեւ սեպտեմբերի 21-ը:**

**ՄԱՐԻԵՏԱ ՄԱԿԱՐՅԱՆ**

# Փառահեղ հաղթանակ, որ ավելի իրական դարձրեց եզրափակիչի ուղեգրի նվաճումը

## *Հայաստանի հավաքականը Ժիլինայում ջախջախեց սլովակներին*

*1-ին էջից*

Ընտրական մրցաշարի վերջնագծում 2-րդ խմբում այնպիսի իրավիճակ է ստեղծվել, որ եզրափակիչի ուղեգրին հավակնելու համար Հայաստանի հավաքականը մնացած հանդիպումներում պետք է անպայման հաղթանակ տոնի: Ինչ խոսք, այդ խնդիրը չափազանց բարդ է եւ ֆուտբոլիստներից բարձր վարպետություն, ուժերի լրիվ կենտրոնացում է պահանջում: Ի պատիվ մեր ֆուտբոլիստների, առաջին քայլը գերազանց կատարվեց: Դա հույս է ներշնչում, որ Մակեդոնիայի եւ Իռլանդիայի հավաքականների հետ հոկտեմբերին կայանալիք հանդիպումներում էլ մեր ընտրանին իր բարձրության վրա կգտնվի եւ կկարողանա պատվով դուրս գալ դժվարին փորձությունից:

Սլովակիա-Հայաստան հանդիպումը չդիտած ֆուտբոլասերներին կարող է թվալ, թե մենք հեշտ հաղթանակ ենք տոնել: Սակայն բոլորս էլ համոզվեցինք, թե ինչպիսի թեժ մրցապայքարում ձեռք բերվեց այդ անչափ կարեւոր հաղթանակը, թե որքան ջանքեր պահանջվեցին մեր ֆուտբոլիստներից հաջողության հասնելու համար:

Ինչպես սպասվում էր, սլովակները հենց հանդիպման սկզբից դիմեցին վճռորոշ գործողությունների եւ առաջին 15-20 րոպեներին բավականին մեծ ճնշում էին գործադրում մեր դարպասին: Այդ ընթացքում անհանգստանալու առիթներ ունեցանք, երբ 2 անգամ դարպասից դուրս գալիս սխալվեց Ռոման Բերեզովսկին ու մրցակիցը քիչ էր մնացել հասներ հաջողության: Բարեբախտաբար փորձառու դարպասապահը հետագայում հաղթահարեց լարվածությունը, վստահ խաղաց ու մի քանի անգամ դարպասը փրկեց վերահաս գոլերից: Անշուշտ, Բերեզովսկու ավանդն էլ մեծ է այս հաղթանակում:

Գովեստի խոսքեր պետք է հղել նաեւ պաշտպանական գծի խաղացողներին, որոնք հստակ գործեցին, կարողացան դիմանալ մրցակցի ճնշմանը: Իսկ հավաքականի 39-ամյա ավագ Սարգիս Հովսեփյանը սլովակների հետ խաղում շատ ակտիվ էր ու բացի մրցակցին նրա կիսադաշտում դիմավորելուց, նաեւ հաճախակի էր մասնակցում թիմի գրոհներին: Նախորդ հանդիպումների համեմատ շատ լավ խաղաց Հենրիխ Մխիթարյանը, որն այս անգամ գործում էր իրեն հոգեհարազատ դիրքում: Նրա խփած 2-րդ գնդակը, որը շատ նման էր նախորդ տարի Երեւանում սլովակների դարպասն ուղարկած գոլին, շրջադարձային եղավ, վերջնականապես թեւաթափ արեց սլովակներին:



Շատ կարեւոր էր, որ առաջին խաղակեսում մերոնց հաջողվեց անառիկ պահել դարպասը: Իսկ ընդմիջումից հետո մեր հավաքականն արդեն իր կամքն էր թելադրում մրցակցին: Յուրա Մովսիսյանի խփած գոլը ստիպեց մրցակցին մեծ ուժերով գրոհների նետվել, ինչը մեր հավաքականի համար հակագրոհելու հիանալի առիթներ ստեղծեց, որոնք էլ հիանալի կազմակերպեցին ու դիպուկ հարվածներով ավարտեցին Հենրիխ Մխիթարյանը, Գեւորգ Ղազարյանն ու Արթուր Սարկիսովը: Ընդ որում վերջին 2 գոլերում իր անմիջական մասնակցությունն ունեցավ Հենրիխ Մխիթարյանը, որն այդ օրը լավագույններից մեկն էր խաղադաշտում: Եվ ընդհանրապես Ժիլինայում մեր բոլոր ֆուտբոլիստներն էլ հիանալի խաղացին ու արժանի հաղթանակ տոնեցին:

Իհարկե, չի կարելի ուրանալ նաեւ հավաքականի գլխավոր մարզիչ Վարդան Մինասյանի մեծ ներդրումն այս հաջողությունում: Նա լավ էր ուսումնասիրել սլովակներին ու ճիշտ մարտավարություն էր ընտրել, ինչը տվեց իր ցանկալի արդյունքը: Գովելի է նաեւ, որ հաշվի մեջ առաջ անցնելուց հետո մարզիչն իր սաներին ցուցում չտվեց հետ քաշվելու եւ պահպանելու հաղթական հաշիվը:

Խաղից հետո կայացած մամուլի ասուլիսում թիմերի մարզիչները հետեւյալ կարծիքն են արտահայտել:

**Վարդան Մինասյան**- Այսօր մեր ֆուտբոլիստները ֆանտաստիկ խաղ ցուցադրեցին: Հպարտանում եմ այս թիմով: Մենք լավ էինք ուսումնասիրել սլովակների ուժեղ եւ թույլ կողմերը ու լրջորեն էինք նախապատրաստվել խաղին: Հավատում էի, որ կարող ենք հաղթել, սակայն չէի սպասում, որ նման խոշոր հաշիվ կգրանցվի, քանի որ Սլովակիայի հավաքականն ամենակազմակերպված պաշտպանությունն ունի մեր խմբի թիմերից: Ընդմիջմանը տղաներին ասացի, որ պետք է ավելացնել: Չեմ ուզում առաջ ընկնել եւ գուշակություններ կատարել: Մեր հաջորդ հանդիպումը մակեդոնացիների հետ է, որոնց հարկավոր է հաղթել:

**Վլադիմիր Վայս**- Նախ կցանկանայի շնորհավորել մրցակցին գոլային պահերն անսխալ իրացնելու համար: Մենք վատ չէինք խաղում, սակայն առաջին խաղակեսում չկարողացանք օգտագործել վտանգավոր 3-4 պահերը: Իսկ հետագայում խաղն անհաջող դասավորվեց մեզ համար, մրցակիցը գոլ խփելու ավելի շատ հնարավորություններ ունեցավ, որոնք օգտագործեց: Պարտության պատասխանատվությունը վերցնում եմ իմ վրա: Հարկավոր էր խաղադաշտ դուրս բերել թարմ ուժեր, այլ ոչ թե իռլանդացիների հետ 90 րոպե խաղացած ֆուտբոլիստներ: Այժմ ընտրական 2-րդ խմբում 4 հավաքականներ հավակնում են ուղեգրերին: Եթե մեզ հաջողվի մնացած երկու խաղերում էլ հաղթել, ապա կարող ենք նույնիսկ 1-ին հորիզոնականում հայտնվել:

Նշենք, որ ռուսական լրատվամիջոցները եւս գովեստի խոսքեր են հղել Հայաստանի հավաքականի հասցեին: Ռուսաստանցի լրագրողներից ոմանք նույնիսկ շնորհակալություն են հայտնել հայերին, որոնց շնորհիվ ռուսներին հաջողվեց իռլանդացիների հետ գոլազուրկ ոչ-ոքիից հետո պահպանել խմբի առաջատարի դիրքը: Ի դեպ, նմանատիպ իրավիճակ էր ստեղծվել անցյալ տարի: 3-րդ տուրում, Երեւանում 3-1 հաշվով հաղթելով սլովակներին, ՀՀ հավաքականը հնարավորություն էր տվել ռուսներին շրջանցելու մրցակցին եւ գլխավորելու մրցաշարային աղյուսակը:

Եվ այսպես, ընտրական մրցաշարի ավարտին մնաց 2 տուր: Հոկտեմբերի 7-ին ՀՀ հավաքականը սեփական հարկի տակ կհյուրընկալի մակեդոնացիներին, որոնք դժվարությամբ 1-0 հաշվով հաղթեցին Անդորրայի ընտրանուն: Այդ օրը կկայանա տուրի կենտրոնական՝ Սլովակիա-Ռուսաստան հանդիպումը: Իսկ իռլանդացիները կհյուրընկալվեն Անդորրային: 4 օր անց մեր հավաքականը վերջին հանդիպումը կանցկացնի՝ հյուրընկալվելով իռլանդացիներին: Կարծում ենք, որ հենց այդ խաղում էլ կվճռվի 2-րդ տեղի հարցը, որն իրավունք կտա մասնակցելու ուղեգրի համար անցումային խաղերին: Ռուսները սեփական հարկի տակ կհյուրընկալեն անդորրացիներին, իսկ սլովակները մրցակցի հարկի տակ կմրցեն մակեդոնացիների հետ: Ինչպես տեսնում ենք, ավելի բարդ է խաղացանկը մեր հավաքականի համար: Սակայն մենք հավատում ենք ազգային հավաքականի վերջնական հաջողությանը:

**Մրցաշարային աղյուսակ**

**2-րդ խումբ**

| | Խ | Հ | Ո | Պ | Գ | Մ |
|---|---|---|---|---|---|---|
| 1. Ռուսաստան | 8 | 5 | 2 | 1 | 10-4 | 17 |
| 2. Իռլանդիա | 8 | 4 | 3 | 1 | 11-6 | 15 |
| 3. Հայաստան | 8 | 4 | 2 | 2 | 17-7 | 14 |
| 4. Սլովակիա | 8 | 4 | 2 | 2 | 6-8 | 14 |
| 5. Մակեդոնիա | 8 | 2 | 1 | 5 | 6-9 | 7 |
| 6. Անդորրա | 8 | 0 | 0 | 8 | 1-17 | 0 |

# Եվս 3 հավաքականներ Եվրո-2012-ի ուղեգրեր նվաճեցին

2012-ի ֆուտբոլի Եվրոպայի առաջնության ընտրական մրցաշարի հերթական հանդիպումներն անվանեցին եզրափակիչի եւս 3 մասնակիցներին: Ժամկետից շուտ բաղձալի ուղեգրերը նվաճեցին Իտալիայի, Հոլանդիայի եւ Իսպանիայի ընտրանիները:

3-րդ խմբում հանդես եկող իտալացիները սեփական հարկի տակ 1-0 հաշվով հաղթեցին Սլովենիայի հավաքականին եւ վաստակելով 22 միավոր, անհասանելի դարձան մրցակիցների համար: Հաղթանակը դժվարությամբ տրվեց: Միայն խաղավարտից 6 րոպե առաջ Պացինին խփեց հաղթական գնդակը: Խմբում կայացած մյուս խաղերում սերբերը հաղթեցին Ֆարերներին (3-1), էստոնացիներն էլ սեփական հարկի տակ 4-1 հաշվով պարտության մատնեցին հյուսիսիռլանդացիներին:

Հաղթարշավը շարունակեց Հոլանդիայի հավաքականը, որը 8-րդ անընդմեջ հաղթանակը տոնեց՝ Հելսինկիում 2-0 հաշվով պարտության մատնելով ֆիններին: Հոլանդացիները վստահորեն գլխավորում են 5-րդ խմբի աղյուսակը: 2-րդ տեղի համար պայքարող շվեդներն ու հունգարացիները հերթական հաղթանակները տոնեցին՝ առավելության հասնելով համապատասխանաբար Սան Մարինոյի (5-0) եւ Մոլդովայի (2-0) ընտրանիների նկատմամբ: Երկու հավաքականներն էլ վաստակել են 18-ական միավոր:

Ուղեգրի հարցը ժամկետից շուտ լուծեց նաեւ Եվրոպայի եւ աշխարհի չեմպիոն Իսպանիայի հավաքականը: 9-րդ խմբում հանդես եկող իսպանացիները 6-րդ խաղն էլ հաղթանակով ավարտեցին՝ սեփական հարկի տակ 6-0 հաշվով ջախջախելով Լիխտենշտեյնի ընտրանուն: 2-րդ տեղում ընթացող չեխերը 8 միավորով են զիջում իսպանացիներին: Շոտլանդիայի հավաքականը հաղթելով Լիտվային (1-0), վաստակեց 8 միավոր:

Բավական խճճված իրավիճակ է 8-րդ խմբում, որտեղ Պորտուգալիայի, Դանիայի եւ Նորվեգիայի հավաքականներն ունեն 13-ական միավոր: Դանիացիները 2-0 հաշվով հաղթեցին նորվեգացիներին: Իսլանդիա-Կիպրոս խաղում 1-0 հաշվով հաղթեցին տանտերերը:

1-ին խմբում 2-րդ տեղի համար պայքարող թուրքերը հյուրընկալվելիս ոչ-ոքի (0-0) խաղացին ավստրիացիների հետ եւ վաստակեցին 14 միավոր: Կամային հաղթանակ տոնեց Ադրբեջանի հավաքականը՝ 3-2 հաշվով Բաքվում հաղթելով ղազախներին: Ադրբեջանը 7 միավորով խմբում զբաղեցնում է նախավերջին՝ 5-րդ տեղը:



4-րդ խմբում Ֆրանսիայի հավաքականը հյուրընկալվելիս ոչ-ոքի (0-0) ավարտելով խաղը ռումինացիների հետ, 17 միավորով գլխավորում է աղյուսակը: 16 միավոր վաստակեց Բոսնիայի ընտրանին՝ սեփական հարկի տակ 1-0 հաշվով հաղթելով Բելառուսին, որը զրկվեց 2-րդ տեղը գրավելու վերջին հույսից: Առաջին հաղթանակը տոնեց Լյուքսեմբուրգի հավաքականը՝ 2-1 հաշվով պարտության մատնելով ալբանացիներին:

Հաղթելով Իսրայելի հավաքականին (3-1), խորվաթները 6-րդ խմբում շրջանցեցին հույներին եւ 19 միավորով գլխավորեցին աղյուսակը: Իսկ հույները լատվիացիների հետ արտագնա խաղում բավարարվեցին ոչ-ոքի արդյունքով (1-1) եւ 18 միավորով նահանջեցին 2-րդ հորիզոնական: Մալթա-Վրաստան խաղն ավարտվեց 1-1 հաշվով:

Բրիտանական դերբիում Անգլիան Յանգի խփած միակ գոլի շնորհիվ հաղթեց Ուելսի ընտրանուն ու 17 միավորով վստահորեն գլխավորում է 7-րդ խմբի աղյուսակը: Անգլիացիները շատ մոտ են ուղեգրին: 2-րդ տեղում ընթացող Չեռնոգորիայի ընտրանին մեկ խաղ պակաս է անցկացրել եւ ունի 11 միավոր: 8 միավոր են վաստակել շվեյցարացիները, որոնք 3-1 հաշվով հաղթեցին բուլղարացիներին:

Այսպիսով, 2012-ին Լեհաստանում եւ Ուկրաինայում կայանալիք ֆուտբոլի Եվրոպայի առաջնության 16 մասնակիցներից 6-ն արդեն հայտնի են: Դրանք են Լեհաստանի, Ուկրաինայի, Գերմանիայի, Իսպանիայի, Իտալիայի եւ Հոլանդիայի հավաքականները: Բոլորիս երազանքն է մասնակիցների թվում տեսնել Հայաստանի հավաքականին:

# Մրցաշարում եռիշխանություն է

Խանտի Մանսիյսկի շախմատի մրցաշարի 7-րդ տուրում Արման Փաշիկյանը հաշտություն կնքեց ռուսաստանցի Ալեքսեյ Բեզգոդովի հետ: 5 միավորով Փաշիկյանը 21-րդ տեղում է: 8-րդ տուրում նա կմրցի բելառուս գրոսմայստեր Ալեքսեյ Ալեքսանդրովի հետ:

Տուրն անհաջող էր Օլեգ Պապայանի համար, որը պարտվեց Ռամիլ Բուլատովին: Օլեգը 4 միավորով 40-րդ տեղում է:

7-րդ տուրից հետո մրցաշարում եռիշխանություն հաստատվեց: 6-ական միավորով աղյուսակը գլխավորեցին Իգոր Կուռնոսովը, Ղադիր Հուսեյնովը եւ Պավել Պոնկրատովը: Կուռնոսովը հաղթեց Ռինաս Ջումաբաեւին, Հուսեյնովն առավելության հասավ Դմիտրի Բոչարովի նկատմամբ, Պոնկրատովն էլ պարտության մատնեց Վիորել Յորդակեսկուին:

# Էլինա Դանիելյանը սկսեց պարտությամբ



**Չինաստանի Շենչժեն քաղաքում մեկնարկեց շախմատի կանանց Գրան պրիի խաղարկության 2-րդ փուլը: Առաջին փուլում անհաջող հանդես եկած Էլինա Դանիելյանը մրցաշարը սկսեց պարտությամբ: Նրա մրցակցուհին Սլովենիան ներկայացնող Աննա Մուզիչուկն էր: Սեւերով խաղացող Դանիելյանը 2 զինվոր պակաս ուներ, ընդ որում սպիտակների զինվորն արդեն հասել էր 7-րդ հորիզոնական ու սպառնում էր վերածվել թագուհու: Ուստի 64-րդ քայլին Դանիելյանը հանձնվեց:**

**Եվս երկու պարտիա արդյունավետ ելք ունեցավ: Մրցաշարը հաջող սկսեց աշխարհի չեմպիոնուհի Հոու Յիֆանը, որը սպիտակներով հաղթեց Եկատերինա Կովալեւսկայային: Ջժաո Սյուն պարտության մատնեց Բաթխույագ Մունգոնտուլին: Ոչ-ոքի ավարտվեցին Յիլդիզ-Ժու Չեն, Ջժունի-Վենգզյուն, Ջմիլիտե-Լուֆեյ պարտիաները:**

*Էջը պատրաստեց* **ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ**

# Օրվա հետքերով

## Սիրո ուժը՝ Հայաստանից

### *Դիանա Քալաշովան հիացրեց չեխ եւ սլովակ հեռուստադիտողներին*



Չեխիայում եւ Սլովակիայում անցկացվող «Չեխիան եւ Սլովակիան ունի տաղանդ 2» հեռուստաշոուի առաջին փուլում, երբ անցկացվում էր մասնակիցների ընտրությունը, փայլուն հանդես եկավ իննամյա Դիանա Քալաշովան, որը ոչ միայն անցավ հաջորդ փուլ, այլեւ ժյուրիի նախագահ, հայտնի չեխ երգչուհի Լուցիե Բիլայից ստացավ հիացական գնահատականներ: Փոքրիկ Դիանան, որ իր ելույթի ավարտին բեմ հրավիրեց նաեւ ծնողներին, իր ձայնով զարմացրեց ու գերեց բոլորին: Ժյուրիի անդամները եւ ողջ դահլիճը հոտնկայս ծափահարում էին հայազգի փոքրիկ երգչուհուն: Նա անգլերենով կատարեց Ջենիֆեր Ռաշի «Սիրո ուժը» երգը: Դիանան չեխերենով պատասխանելով ժյուրիի անդամների հարցերին, նշեց , որ ինքը ծագումով Հայաստանից է եւ դպրոցում սովորում է միայն ամենաբարձր գնահատականներով: Լուցիե Բիլան բարձրացավ բեմ, կանգնեց երգչուհու կողքին եւ համբուրելով նրան ասաց, որ թե՛ նախկինում, թե՛ հիմա եւ թե ապագայում դժվար թե իրենց շոուն նման տաղանդ տեսնի, եւ ինքը երջանիկ է, որ նրա առաջին ելույթին ներկա է: Երգչուհին նաեւ առաջարկեց Դիանային ապագայում իր հետ երգել եւ նրանից ստացավ դրական պատասխան: Բիլան նաեւ նշեց, որ իսկական երգչի համար Դիանան ամեն ինչ ունի՝ գեղեցկություն, համեստութուն, ձայն եւ, իհարկե, հիանալի ծնողներ: Ժյուրիի սլովակ անդամ Յարոսլավ Սլավիկը Դիանային համարելով նոր աստղ եւ տաղանդ, հիշեց հայկական արմատներ ունեցող ամերիկահայ երգչուհի Շերին, ընդգծեց նրանց գենետիկ կապը, եւ հաստատեց, որ Դիանան էլ Ջենիֆերի նման փայլուն կատարեց այդ երգը:

Առջեւում դեռ մրցույթի հաջորդ փուլերն են, իսկ վերջում նաեւ կլինի հեռուստադիտողների քվեարկություն, իսկ չեխական թերթերն արդեն գրել են, որ Բռնո քաղաքում տեղի ունեցած մրցույթի առաջին փուլում Բիլան արդեն ընտրել է իր ֆավորիտին: Դիանան 2002-ին ծնվել է ռուսական Նովոկուզնեցկ քաղաքում, իսկ 2003 թվականից ապրում են Պրահայում: Մասնակցել է բազմաթիվ մրցույթների, իսկ այս տարի նաեւ Ղրիմում անցկացված «Նոր ալիք» երգի փառատոնին, ուր հասել է մինչեւ եզրափակիչ:

Այստեղ կարող եք լսել Դիանա Քալաշովայի ելույթը՝

*http://www.serial-online.cz/ceskoslovensko-ma-talent-2/casting-diana-kalashova.aspx*

**«Օրեր» եվրոպական ամսագիր, Պրահա**

## «Աննան» եթերային աղբ չէ՞

Հանրային հեռուստառադիոխորհրդի նախագահ **Ալեքսան Հարությունյանը** համոզված է, որ որեւէ մրցույթում «Աննա» սերիալն առաջին հորիզոնականը կզբաղեցնի:

Նա «Զենք լռելու» նախաձեռնության կազմակերպած մրցանակաբաշխությունը, որը Facebook սոցիալական ցանցի օգտատերերի կարծիքների հիման վրա «Աննա» սերիալին «Աղբ եթերից» առաջին մրցանակն էր տվել, նաեւ Հ1 ուղարկել 100 դրամ, աղբ դուրս թափելու համար, համարում է միջոց ճանաչվածություն ձեռք բերելու: «Այդ մրցանակաբաշխությունը կհամարեմ հումանիտար օգնություն՝ «Աննա» սերիալի կողմից այդ նախագծին», ասաց նա: Բոլոր նրանց համար, ովքեր կարծում են, որ «Աննան» ու Հանրայինի մնացած հեռուստասերիալները եթերային աղբ են, իսկ դրանց թիվը բավական մեծ է, տեղեկացնում ենք, այս տարի «Քաղցր կյանք» եւ «Աննա» հեռուստասերիալները կավարտվեն: Բայց ուրախանալու առիթ դեռ կա, եթերում կշարունակի իր գոյությունը «Հրեշտակների դպրոցը»:

Երեկվա ասուլիսում Ալեքսան Հարությունյանը տեղեկացրեց, որ հեռուստասերիալներին զուգահեռ կնկարվեն նաեւ գեղարվեստական ֆիլմեր: Այժմ Հանրայինը պատրաստվում է դեկտեմբերի 3-ին կայանալիք մանկական «Եվրոտեսիլին»: Քննարկման է դրված հաջորդ տարի «Բաքվում կայանալիք Եվրոտեսիլին մասնակցության հարցը: Հայկական կողմը դիմել է եվրոպական հեռարձակողների խորհուրդ եւ պահանջել ապահովության երաշխիքներ:

Հարությունյանի գնահատականներով՝ այս տարի էլ «Հայլուրը» կփորձի պահպանել անվիճելի առաջատարի դիրքերը: Նոր նախագծերից է հայ-վրացական «Երկու աստղը», որ եթերում կլինի հոկտեմբերի 1-ից: Նախատեսվում են սոցիալական բնույթի հաղորդումներ, սեպտեմբերի 21-ին կցուցադրվի «Գարեգին Նժդեհ» վավերագրական ֆիլմը:

Անդրադառնալով WikiLeaks կայքի աղմկահարույց բացահայտումներին, որտեղ նշվել էր Ալեքսան Հարությունյանի անունը՝ որպես բավական ազդեցիկ մարդ ու ՀՀ երկրորդ նախագահ Ռոբերտ Քոչարյանի որոշումների վրա ազդող անձ, Հարությունյանը դրանք անվանեց նորաձեւ դարձած հրապարակում, որը չի մեկնաբանի: «Դրանք ամերիկյան տարբեր դիվանագետների կարծիքն են: Ես չեմ ցանկանում մեկնաբանել մանավանդ տարիներ առաջ տարածված ինֆորմացիան: Եթե դա վերաբերեր այսօրվա իմ գործունեությանը, որոշ մեկնաբանություն կտայի»:

Հ. Հ.

## ԾԱՆՈՒՑՈՒՄ

«Քաղաքացիական ծառայություն» շաբաթաթերթում 2011 թվականի սեպտեմբերի 7-ի թիվ 29/374 համարում Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության (ՀՀ ԱՎԾ) կողմից հրապարակված հայտարարությունը՝ Ծառայության աշխատակազմի քաղաքացիական ծառայության կրտսեր թափուր պաշտոնները զբաղեցնելու մասին չեղյալ համարել:

**ՀՀ ազգային վիճակագրական ծառայության աշխատակազմ**

## ՀԱՍԱՐԱԿԱՅՆՈՒԹՅԱՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ

ՀՀ բնապահպանության նախարարության կողմից ՀՀ ջրային օրենսգրքի եւ ՀՀ կառավարության 07.03.03 թ. N 217-Ն եւ N 218-Ն որոշումների պահանջների համաձայն մշակվում է ՀՀ Արմավիրի մարզում գործող«Ակնալիճ» ՋՕԸ-ին նույն մարզի Հայկաշեն համայնքի վարչական տարածքում ոռոգման նպատակով ստորերկրյա ջրային ռեսուրսից 90,0 լ/վրկ ջրառի ջրօգտագործման թույլտվության նախագիծը:

Բոլոր շահագրգիռ անձինք, ովքեր կցանկանան ծանոթանալ փաստաթղթի նախագծի նախնական տարբերակին, կարող են աշխատանքային օրերին ժամը 17-18-ը դիմել ՀՀ բնապահպանության նախարարություն (հասցեն՝ Կառավարական 3-րդ տուն, 5-րդ հարկ, 541 սենյակ):

Հասարակայնության կողմից փաստաթղթի նախնական տարբերակի լսումը տեղի կունենա 2011 թ. սեպտեմբերի 15-ին ժամը 16-ին Կառավարական 3-րդ տուն, 5-րդ հարկ, 541 սենյակ:

***ՀՀ բնապահպանության նախարարություն***

## ՀՀ ԱՄՆ դեսպանատունը մրցույթի է հրավիրում

Ինտերնետային ծառայություններ մատուցող ընկերություններին:
Մրցութային փաթեթները կարող են ձեռք բերել Ամերիկյան 1 հասցեում,
ԱՄՆ դեսպանատան կենտրոնական մուտքից,
օգոստոսի 25-ից մինչեւ սեպտեմբերի 8-ը, ժամը 9:00 – 18:00-ն:

## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԲԱՑ ՄՐՑՈՒՅԹԻ ՄԱՍԻՆ

**Մրցույթի ծածկագիրը՝ ԼՂ/Դ-1/11**

Պատվիրատուն՝ «Հայաստան» համահայկական հիմնադրամը /ք. Երևան, Կառավարական 3-րդ շենք/, հայտարարում է բաց մրցույթ, որն անցկացվելու է մեկ փուլով:

Մրցույթում հաղթող ճանաչված մասնակցին սահմանված կարգով կառաջարկվի կնքել ԼՂՀ, Շուշի քաղաքի Եզնիկ Մոզյանի անվան մասնագիտական դպրոցի կառուցման աշխատանքների իրականացման պայմանագիր:

Գնման առարկա է հանդիսանալու ԼՂՀ, Շուշի քաղաքի Եզնիկ Մոզյանի անվան մասնագիտական դպրոցի կառուցման աշխատանքները:

Մրցույթի հրավեր ստանալու համար անհրաժեշտ է փոխանցել 45.000 դրամ «Հայաստան» համահայկական հիմնադրամի «Կոնվերս Բանկ» ՓԲԸ-ում ունեցած N 1930001437120100 հաշվեհամարին և դիմել «Հայաստան» համահայկական հիմնադրամ՝ ս.թ. սեպտեմբերի 16-ից մինչև ս. թ. հոկտեմբերի 5-ը, ժամը 10.00-ից մինչև 18.00-ն: (ք. Երեւան, Կառավարական թիվ 3 շենք, 3 սենյակ, Սոս Գևորգյանին, հեռ. 52-09-40 (ներքին 103)): «Հայաստան» համահայկական հիմնադրամը պարտավորվում է պահանջվող վճարի անդորրագիրը ստանալուց հետո, երկու աշխատանքային օրվա ընթացքում, մրցույթի հրավերը տրամադրել պահանջ ներկայացրած անձին:

Մասնակիցների որակավորման տվյալների՝ մրցույթի հրավերով սահմանված պայմաններին համապատասխանությունը գնահատելու համար, մասնակիցները պետք է պատվիրատուին ներկայացնեն մրցույթի հրավերով նախատեսված փաստաթղթերը: Մրցույթի հայտերը՝ կազմված հայերեն, անհրաժեշտ է ներկայացնել վերոհիշյալ հասցեով՝ մինչև ս. թ. հոկտեմբերի 07-ը, ժ. 11.00-ն:

**«Հայաստան» համահայկական հիմնադրամ**




ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ՝ 58-29-60

Լրատվական գործունէութիւն իրականացնող՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետութեան 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 02 Ա N 047261, տրուած՝ 18.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիքեան: Տպաքանակ՝ 3000, ստորագրուած է տպագրութեան՝7.9.2011, գինը՝ 100 դրամ, տպագրւում է «Նոյեան Տապան» ՍՊԸ տպարանում՝ Իսահակեան 28: